

3819

Հրատարակութիւն Ս. Ամենափրկիչ Վանուց Տպարանի

Ֆիզջ Էլ-ՀօսսէՅն  
ԴԱՄԱՍԿՈՍԻ ԲԵԴՈՒԻՆ ԱԶՆՈՒԱԿԱՆ.

ՄԱՐՏԻՐՈՍ Ա. Ց  
ՀԱՅԱՍՏԱՆ

(Արաբերէն)

Ա. Աղջերենից թարգմանեց  
ԳԱՐԵԳԻՆ ԳԱ. Յ. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

Տպարան  
Ս. Ամենափրկիչնան Վանուց  
ԶՈՒԴԱ-ՄՊԱՀԱՆ  
1920

9(47. 925)  
Հ - 83

9(47.925)

2-83

ՀԱ ԳՅ ՄԻՒԾՈՒՅՆ

ԹԵՑՉ ԷԼ-ՀՕՍԽԵՑՆ

ԴԱՄԱՍԿՈՍԻ ԹԵՇՈՒԻՆ ԱԶՆՈՒԱԿԱՆ

ՄԱՐՏԻՐՈՍԱՑՈՒ

ՀԱՅԱՍՏԱՆ

(Արաբերէն)

Անգլերէնից բարգմանեց

ԳԱՐԵԳԻՆ ՔԱՀ. Յ. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

Տպարան  
Ս. Ամենափրկչեան Վանուց  
ԶՈՒՂԱ-ՍՊԱՀԱՆ

1920

2004

## ՆԱԽԱԲԱՆ

Ես մի Բերուին եմ, Հօրան նտհանգի էլ-Լէջաթում բնակւող էլ-Սօլութ ցեղագետներից մէկի որդի: Ցեղապետների միւս որդիների նման՝ ես մտայ Պօլսի Տոհմային Դպրոցը, և ապա Արքունական ձեմարտնը: Ուսումնա աւարտելուց յետոյ՝ ես ծառայեցի Միւրիայի (Դամակոսի): Վալու կազմի մէջ, որտեղ ե երկար ժամանակ մնացի: Ապա Կարգուեցի Գայմագամ Մամուրէթ-էլ-Ազիզի (Խարբերդի), պաշտօնավարելով երեք և կէս տարի, որից յետոյ վաստաբանութեամբ պարագեցի Դամակոսում, իմ Ընկերները լինելով Շաքրի Բէյ էլ-Ասլի և Արդոլ-Վահհաբ Բէյ էլ-էնգիզի: Յետ այնու, ես անդամ դարձայ մինոյն տեղի Ընդհանուր Փողովի, իրեն պատղամաւոր հօրանի, և յետոյ անդամակցեցի մինոյն Փողովի Յանձնախոմրի մէջ: Պատերազմը ծագելիք՝ հրաման ստացայ նախկին պաշտօնս շարունակել, այն է՝ Գայմագամութիւնը. բայց ես մերժեցի, որովհետեւ վաստաբանութիւնը կամ իրաւագիտութիւնն ընդհանրապէս աւելի շահաւետ էի համարում և աւելի հանգիստ:

Մի ինչ որ մատնիչ ինձ ամբաստանել էր, որ ես պատամաւոր եմ Լիբանանում կազմուած մի Ընկերութեան, որի նպատակն էր յաջողեցնել արար ժողովրդի անկախութիւնը Անզիւյի և Ֆրանսիայի հովանաւորութիւնն տակ, և գրգռել զեղերին Տաճկաց Կառավարութեան դէմ: Այս ամբաստանութեան լուրն ստանալուն պէօն Կառավարութիւնն ինձ ձերրակալեց և բանտ նետեց, և ապա մի խումբ ստորիկանների և ժանդարմների հօկոզութեամբ՝ ինձ ուղարկեց Ալիյա, որտեղ քաղաքական յանցաւորները դատաւում էին: Ինձ արձակւեցին, բայց որովհետեւ կառավարութիւնը նշանակութիւն չէր տալիս այդպիսի դէպքերում կայացած վճիւներին, և որոշել էր մէջտեղից վերցնել և ջնջել բոլոր լուսամիտ արաբներին — թէկուզ ինչ հանդամանքների ներքոյ էլ գտնուէին ... անհրաժեշտ համարեցին ինձ ուղարկել Կարին, և Զէմալ Փաշան ուղարկեց ինձ այնաեղ մէկ պաշտօնեայի: և հինգ կանոնաւոր զինւորների հետո Նրբ Տիգրանակերտ հասայ, ուռամները յարձակում էին գործում կարինի

93915-42

2001-2002

Հասան Ղալէ ամրութեան վրայ, և այս պատճառով Տիգրանակերտի Վալին հրաման ստացաւ ինձ իր քաղաքում պահելու:

Քոան և երկու օրուայ անտեղի բանարկութիւնից յետոյ՝ ինձ արձակեցին: Ես մի տուն վարձեցի և Տիգրանակերտում մնացի վեց և կէտ ամիս, ականատես լինելով և ամենավտահելի ազդիւրներից լսելով այն ամենն ինչ որ տեղի ունեցաւ հայերի վերաբերմամբ: Իմ լրատուներն էին Տիգրանակերտի և նրա Ճրշտնի բարձրագոյն պաշտօնեաները կամ երևելիները, նաև ուրիշները վանից, Բաղէշից, Խարբերդից, Հալէպից և Կարինից: Խուռաների զրաւումից յետոյ՝ Վանի տաճիկ ժողովուրդը գաղթել էր Տիգրանակերտ, իսկ Բաղէշի ժողովուրդն ու պաշտօնեաները վերջերս էին միայն տեղափոխուել նոյն տեղը: Կարինից բազմաթիւ պաշտօնեաներ Տիգրանակերտ եկան զինուրական կամ անձնական գործի համար, իսկ մերձակայ Խարբերդից շատ մարդիկ եկան մեզ մօտ Որովհետև վերջինում Գայմադամ էի եղել տարիներ յառաջ, և ծանօթներ շատ ունէի այնտեղ, և արանցից բոլոր լրերը լսեցի: Յատկապէտ Տիգրանակերտի ցեղապետների հետ բանում հղած ժամանակ, ես կարողացայ շարժումն ուստումասիրել ամեն մանրամանութեամբ: Երբ պատերազմը շուտով կը վերջանայ, ոոյն դրբի ընթերցողների համար կը պարզուի, որ իմ գրածները ճշմարիտ են, և միայն փոքրիկ մասն են պարօնակում այն խժդժութեանց, որ տաճիկները դորձեցին դժբախտ հայ ժողովրդի վերաբերմամբ:

Տիգրանակերտում մի միջոց մնալուց յետոյ՝ ես փախոյ, ազատուելու գերութիւնից և երկիւղից, որ առաջ էր եկել մի ինչ որ դէպքից, որ տեղի ունեցաւ շնորհիւ մոլեսանդ տաճիկների: Շատ նեղութիւններից յետոյ՝ երբ յաճախ ենթակայ էի մահուան ու սպանման, հասայ Բասրա: Ինձ մի միտք յդացաւ հրատարակելու այս զիքը, իրրե ծառայութիւն ճշմարտութեան և տաճիկներից հալածուած մի ժողովրդի դատին, նաև, ինչպէս որ զրքիս վերջում յայտնել եմ, պաշտպանելու Խոլամական հաւատը Եւրոպացիների կողմից յայտարարելի Փանատիկոսութեան տաճաստանութեան դէմ: Թհղ Աստուած ուղիղ ճանապարհով զեկովարի մեզ:

Այս նախարանն ես գրել ևմ Բօմբէյում, 1916 թ, Սեպտեմբերի 1-ին:

Ֆիթջ էլ.—ՀՕՍՍԷՑՆ

## ՄԱՐՏԻՐՈՍԱՑԱԾ

### Հ Ա Յ Ա Ս Ա Ն Ի

#### ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Ուրուազիծ Հայոց Պատմութեան:—Հին գարերում հայ ազգը, միւս ազգութիւնների նման, չունէր ինքնազար կառավարութիւն, մինչև Աստուած նրանց մի մարդ պարզեց, Հայէ անունով, մի անվեհեր ղեկավար, որը հայերին միացրեց և նրանցով կարմեց մի անկախ տէրութիւն: Այս տեղի ունեցաւ քրիստոնէական թուականից լառաջ: Հայ ազգն իր անկախութիւնը պահպանեց երկար ժամամակ, հասնելով իր փառքի և բարօրութեան ամենաբարձր աստիճանին Տիգրան թագաւորի օրով, որը Տիգրանակերտ Իեարբէքիր—քաղաքը Կառավարութեան մայրաքաղաքը դարձրեց: Հռովմալեցւոց ժամանակ Հայաստանն անկախ մնաց, իր իշխանութիւնը տարածելով Փոքր Ասիայի մի մասի, Սիւրիայի և Պարսկաստանի մի հատուածի վրայ, բայց հայերը պաշտպանութիւն ցոյց տուած լինելով Հռովմին թշնամի մի քանի թագաւորների՝ Հռովմալեցիք պատերազմ լայտարարեցին և զօրքը մտաւ Հայաստանի մայրաքաղաքը, և այն ժամանակից ՚ի վեր հայերը կորցրին իրենց անկախութիւնը: Երկիրն սկսեց տատանուել բռնակալութեան ալիքներից, մերթ անկախ և մերթ հպատակ օտար իշխանութեան, մինչև արաբների և ապա օսմանցիների տիրապետութիւնը:

Հայերի բիւր:—Օսմանեան Պետութեան մէջ հայերի թիւը չէ բարձրանում 1,900,000 հոգուց: Այս թիւը վերցրել եմ մի տաճիկ գրողի գրքից, յայտնելով որ դա պաշտօնական մարդահամարն է, որ կառավարութիւնը վերցրել էր Բալկանեան պատերազմից լառաջ: Նա հաջում է, որ Ոււ-

միլիարդում ապրող հայերը կազմում են 400,000 հոգի. իսկ Օսմաննեան Ասիայում՝ 1,500,000 հոգի: Ոռուահայերն ու Պարսկահայերը չեն կազմում աւելի քան 3,000,000 հոգի: Այսպիսով ՚ի սփիւռս աշխատի ցրուած հայերի թիւը չորս և կէս միլիոնից աւելի է:

Հայաբնակ նահանգները: — Հայաբնակ նահանգներն են՝ Տիգր սնակերտ, Վան, Բաղեշ, Կորին, Խարբերդ, Սեբաստիոն, Արտաշատ, Հալէք, Տրավիզոն, Բրուսան և Պօլիս: Վանի, Բաղեշի, Արտաշատի, Տիգրանակերտի, Կորինի և Խարբերդի նահանգներում նրանց թիւն աւելի էր քան միւս տեղերում, բայց ամեն գէպըում աւելի փոքր տաճիկներից և քիւրդերից, բացառութեամբ Վանի և Բաղեշի նահանգներից, ուրիշամ հաւասար և կամ աւելի գերազանց էին: Բաղեշի նահանգի Մուշ գաւառում քիւրդերից աւելի բազմաթիւ էին. այդ կողմերի արհեստն ու վաճառականութիւնը հայերի ձեռքին էր. նրանց հոգագործութիւնն աւելի յաջող դրութեան մէջ էր. այդ նահանգներում տաճիկներից ու քիւրդերից աւելի տռաջադէմ էին. նրանց բազմաթիւ գպրոցները համեմատած օտար հայրենակիցների փոքրաթիւ գպրոցների հետ ապացոյց են ծառայում նրանց առաջադիմութեան և հակադարձար միւս ցեղերի լեռագիմութեան:

Հայ կուսակցութիւններ: — Հայերն ունեն գիտական ու բաղաքական կուսակցութիւններ, որոնց ամենակարեւորն են՝ Դաշնակցական ու Հնչակեան կուսակցութիւնները: Այս երկուսի ծրագիրն այն է, որ ամեն ջտնք գործ դրուի և ամեն միջոց ձեռք առնուի հասնելու այն նապատակին, որից ոչ մի հոլ չէ շեղուամ, այսինքն՝ ունենալ վարչական անկախութիւն Եւրոպայի Մեծ Պետութիւնների հսկողութեան ներքոյ: Իսկ հանգիպած բազմաթիւ հայերից ես հետաքրքրուել եմ և տեսել, որ ոչ մէկը չէ ցանկանում ունենալ քաղաքական անկախութիւն, պատճառն որ նահանգներից շատերում, հայերն աւելի փոքրաթիւ են քիւրդերից, և անկախութիւն ստանալու դէպըում քիւրդերն հայերից աւելի օգուտներ

ձեռք կը բերեն: Յարդ, քիւրդերը ագիտութեան ամենաստոր աստիճանում են գտնուում իրենց երկրում տիրում է խառնակ դրութիւն և քաղաքներն ամայացած են: Հայերը, հետեւաբար, նախընտրում են մնալ Տաճկական իշխանութեան ներքոյ, պայմանաւ որ գործերը վարուին Եւրոպական Մեծ Պետութիւնների հսկողութեան ներքոյ, որովհետեւ հաւատք չեն ընծայում տաճկական խոստումների վրայ, քանի որ երէկուայ խոստացածն այսօր մերժուում է: Այս երկու կուսակցութիւններն, ուրեմն եռանդագին աշխատում են այս գաղափարը տարածել հայերի մէջ, և ամեն գնավ հասնել իրենց նպատակին: Ինձ մի հայ զինուորական ասել է, որ այս կուսակցութիւններից մէկը մտադիր է հասնել իր նպատակին ներքին ապատամբութիւններով, իսկ միւսը խաղաղ միջոցներով:

Աերոյիշեալը ներկայացնում է այս երկու կուսակցութիւնների համառօտ բովանդակութիւնը: Ասում են, սակայն, որ գրանց մէկի ծրագիրը ձգտում է ունենալ հայ քաղաքական անկախութիւն:

Ովքեր որ ցանկանում են մանրամասն տեղեկութիւններ ստանալ հայոց պատմութիւնից կամ կուսակցութիւններից, պէտք է դիմեն նրանց պատմական գրքերին:

Հայկական կոտորածը: — Պատմութիւնը չէ արձանագրում մի փաստ, որ քիւրդերը՝ միենոյն նահանգներում ապրող հայերի հայրենակիցները՝ բաղխում ունեցած լինեն վերջինների հետ, կամ կողոպտած նրանց գոլքը և կամ բըռնաբարած նրանց կանանց, մինչեւ 1888 թուականը, երբ տաճկաց կառավարութեան հրամանով՝ նրանք գլուխ բարձրացրին և հայերին կոտորեցին Վանում, Խարբերդում, Կարինում և Մուշում: Նորից Արդուլ Համիդ Բ.-ի օրով, 1896-ին, երբ հայերն օտքի ելան և մտան Պօլսի Օտտօմանեան Թրամատունը, Սուլթանին ահարեկելու և ստիպելու նրան հրատարակել Սահմանադրաւթիւնը, այն ժամանակ Սուլթանը կոտորածի հրաման արձակեց Պօլսում և նահանգներում: Բայց

շարդ փորձերը ցոլց են տուել, որ տաճկաց ժողովուրդն ինքնառքերար ընդհանուր կոտորած չէ սարքել, միայն երբ բռնագատուած է եղել Կառավարութեան կողմից 1896-ի կոտորածում, 15,000 հոգի կոտորուեցին միարն Պօլսում, իսկ 300,000 հոգի՝ նահանգներում:

Սահմանադրութեան հոչակումից մի քանի ամսից յետոյ՝ հայերն նաև կոտորուեցին Ադանայի նահանգում, բայց այս կոտորածն Ադանայի և Հալէպի երկու նահանգներից գէն չանցաւ, ուր Արդուլ Համիդի իշխանութիւնը գերիշխող էր մինչև 1909 թուականը: Այս կոտորածի կամ սպանուածների թուի մասին, սակայն ոչ մի մանրամասն տեղեկութիւն չ'ունեմ:

Հայերի գոյքն ու անսառւնները կողոպտուեցին, աներն աւերուեցին, մանաւանդ 1896 թուի կոտորածին, բայց հայրենակիցներից շատերը պաշտպանեցին և թագցրին նրանց իրենց աներում Կառավարութեան պաշտօնեաների ձեռքից ազատ մնալու:

Կառավարութիւնը հաստատուն կերպով գրգռում էր քիւրդերին ու տաճիկներին: Հայերի գէմ, իսլամական հաւատը ծառայեցնելով իբրև միջոց նպատակին հասնելու, ՚ի նկատի ունենալով մահմեդականների տգիտութիւնն իրենց կրօնի ճշմարիտ օրէնքների մասին:

Օսմանեան Կառավարութեան յայտարարութիւնը:— Ռուզիետև հայերը օրէնքի հակառակ գործեր են կառարում և ամեն առիթից օգտուում խանգարելու Կառավարութեան. որովհետև նրանց մօտ գտնուել են արգելուած գէնքեր, առուրեր և պայմանագիրներ, ներքին ապստամբութիւն յարօւցանելու. որովհետև նրանք Վանում մթսուլմաններին սպանել են և օգնել Ռուսական զօրքին մի այնպիսի ժամանակ, երբ Կառավարութիւնը պատերազմական գրութեան մէջ է Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի հետ, և երկիւղ կրելով, որ մի գուցէ հայերն իրենց սովորութեան համաձայն, իսկովութիւն ու ապստամբութիւն

յառաջ բերեն, ուստի Կառավարութիւնս վճռել է, որ բոլոր հայերը հաւաքուեն և ուզարկուեն Մաւսուլի, Սիւրիայի և Իէլ-էլ-Զօրի նահանգները, նրանց կեանքը, գոյքն ու պատիւը ապահովուած լինելով: Անհրաժեշտ հրամաններ տրուել են նրանց հանգստութեան և նոր տեղերում քննկութեան համար, մինչեւ պատերազմի վախճանը»:

Այս է Օսմանեան Կառավարութեան պաշտօնական յարտարարութիւնը հայերի վերտքերմամբ: Բայց մի առանձին որոշում ևս կայտցրել էին, որ քաղաքապահ զօրքերի խմբեր (միլիցիա) կազմուեին օգնելու ժանգարմներին՝ հայկական ջարդերի ժամանակ, որ ոչ մի հայ գուշը չը մնար և սպանման ու աւերման գործը տեղի ունենար «Միութեան» Կօմիտէի հաւատարիմ գործակալների հսկողութեան ներքոյ, որոնք յայտնի էին իրենց վայրագութեամբ: Բէշիդ Բէլ կարգուեց Տիգրանակերտի նահանգներու և շնորհուեց լայն իրաւունքներ, ունենալով իր արտօնագրութեան տակ տիրահրացակ մարդասպանների մի վոհմակ, օրինակ՝ Ահմէդ Բէլ էլ Մէրգի, Թօշդի Բէլ, Խալիլ Բէլ և ուրիշներ այս տիպի:

Այս սրոշման պատճառաբ, ինչպէս որ բառաջ էր բերուած, այն էր, որ Եւրոպայում և Եգիպատում ապրող հայերն իրենց անձնուէր համարիոհներից քառն հոգի ուղարկել էին սպանելու Թալատթին, Լինվէրին և «Միութեան» այլ պարագալուխներին: Պորձն անյաջազգութեան հանդիպեց, որպէս հետև մի ինչ որ հայ, գաւաճան իր աղքին և բարեկամ Բէղրի Բէլին՝ Պօլսի Հանրային Ապահովութեան պետին (կամ ըստ ոմանց՝ Ազմի Բէլ), հրատարակեց գաղտնիքն և երևան բերեց հայ գործակալների Պօլսի ժամանումը: Սրանք ձերբակալուեցին և գլխատուեցին, բայց գաղտնիք կերպով, որպէս զի չ'ասուէր, թէ մարդիկ կային, որոնք փորձում էին սպանել «Միութեան Կուսակցութեան» պետերին:

Մի ուրիշ յառաջ բերուած պատճառ ևս այն էր, որ մի քանի հայեր, որոնց Կառավարութիւնը հաւաքել էր Հալէպի և Ադրիանոպիսի նահանգներից և ուզարկել լրացնելու իրենց

զինւորական ծառայութիւնը, զէնքերով Զէլթուն փախան, ուր վաթսուն հոգի կաղմելով՝ սկսեցին դիմադրել Կառավարութեան և յարձակուել ճամբորդների վրայ: Կառավարութիւնը զինւորական ոյժ ուղարկեց Թափրի Փաշալի հրամանատարութեամբ, որն ուղևորուեց յիշեալ վալրը, աւերեց Զէլթունի մի մասը, և մարդ, կին ու երեխայ սպանեց տռանց հայերի կողմից դիմադրութեան հանդիպելու: Նա մարդկանց ու կանանց հաւաքեց և գուրս ուղարկեց զանազան զինւորախմբերի հսկողութեամբ, որոնք սպանեցին մարդկանց շատերին, իսկ գալով կանանց՝ էլ մի հարցնէք նրանց վիճակի մասին: Սրանք յանձնուեցին օսմաննեան զինւորներին. երեխաները քաղցից ու ծարաւից մեռան. ոչ մի մարդ կամ կին չը հասաւ Սիւրիա, երիտաստրդները մորթառուեցին, իսկ գեղեց կադէմ կանայք ընկան տաճիկ երիտաստրդների ձեռքը:

Բումիլիայից եկած գաղթականները տարուեցին Զէլթուն և հաստատուեցին այնտեղ: Քաղաքի անունը փոխուեց Մէշագիյա, որպէս զի հայկական անունից ոչ մի լիշտառակ չը մնայ: Համայից կատարած ճանապարհորդութեանս ընթացքում, բազմաթիւ հայ տղամարդիկ ու կանայք տեսանք նըստած փոքրիկ վրանների տակ, որոնց կառուցել էին սաւաններից, կասլերներից ևայն: Նրանց գրութիւնը շատ խլճալի էր, և կարող էր ուրիշ կերպ լինել: Տարագրեալներից շատերը սովորութիւն ունեցած էին նստել միայն բազկաթուների (տատանւող աթոռների) վրայ, շրջապատուած շքեղագարդ կահ-կարասիքով, այնպիսի տներում, որոնք կառուցուած էին ամենալաւ ոճով, և կարգին դասաւորուած ու կահաւորուած: Ես տեսայ, ինչպէս ուրիշներն ես տեսան, շատ հայ տղամարդիկ ու կանայք երկաթուղարին բեռնաբարձ վագոններում Հալէպի և Համայի միջև, իսոնուած մի այնպիսի ձեռով, որ մարդու գութը շարժւում էր:

Հալէպ հասնելուց և երկու օր մնալուց յետոյ՝ երկաթուղիով գնացինք Սէր-Սրաբ Պունարի կոչուած տեղը: Ինձ ուղեկցում էին հինգ հայեր, որոնք խիստ հսկողութեան տակ

էին, և ուղարկում Տիգրանակերտ: Յիշեալ կայսրանից մենք ստքով գնացինք Աէրուջ, ուր իշեանեցինք մի քարշանսարայում, լի հայ կանանցով ու երեխաներով և մի քանի հիւանդ մարդկանցով: Կանայք ողբարձր գրութեան մէջ էին, որովհետեւ Կարինից ճանապարհորդել էին ստքով, և այն էլ երկար ժամանակ էր տեւել մինչև Սէրուջ հասնելը: Ես նրանց հետ տաճկաց լեզով խօսեցի և նրանք ինձ ասացին, որ ժանդարմները նրանց բերել էին անջուր տեղեր, մերժելով ջրի տեղն ասել, մինչև որ գումար ստանալին: Կանանցից մի քանիսն, որոնք լիդ էին, ծնել էին ճանապարհին և լքել իրենց մանուկներին անմտցրաբնակ անտապատներում: Նրանցից շատերն իրենց երեխաներին բաց էին թողել, կամ յուսահատութիւնից և կամ հիւանդութիւնից ու նուազութիւնից, որոնց պատճառով չէին կարողացել երեխաներին իրենց հետ տանել, և պարտաւորուած նրանց գէն էին ձգել: Ոմանք ևս քնական սիրուց դրյուած՝ այս միջօցին չէին գիմել, այլ երեխաներից անբաժան մնալով միասին մեռել էին անտապատում: Ինձ պատմեցին, որ նրանց մէջ կային այնպիսիները, որոնք սովոր չէին մինչև անդամ մէկ ժամ քալել, այլ բարեկեցիկ կեանք էին ունեցած եղել, ծառաներով և աղախիներով շրջապատուած: Սրանք ընկել էին քիւրդերի ձեռքը, որոնք ոչ մի Սստուածային օրէնք չեն ճանաչում և ապրում են բարձրաբերձ սարերում և խիտ անտառներում, գիշատիչ անտառների նման: Նրանց պատիւն արատաւորուեց ու մեռան վայրագ բռնաբարութեամբ, շատերը գերագասելով ինքնասպան լինել քան թէ զոհել իրենց առաքինութիւնն այս գիշատիչ գալերին:

Մենք ապա սալլերով Սէրուջից գնացինք Ել-Բահա (Ուրֆա). ճանապարհին ես մի բազմութիւն տեսալ ստքով քալելիս, և հեռուից թւում էր թէ զօրք էր, որ պատերազմի գաշտն էր զնում: Երբ որ մօտեցայ, տեսայ որ հայ կանայք էին, որոնք քալում էին բոկոտն ու ինքնած, զօրաշարքով՝ նրանց յառաջ ընթացող ու հետեւղ ժանդարմների:

նման։ Երբոր մէկը յետ էր մնում ժանդարմը ծեծում էր նրան հրացանի կոթով, գետին ձգելով, մինչեւ որ բարձրանում էր ստրստփահար և միտում իր ընկերներին։ Բայց եթէ մէկը յետ էր մնում հիւանդութիւնից, նա լքում էր անտպատում, մենակ, տնօդնական ու անմիտիթար, կեր գառնալու վայրի անասուններին և կոմ մի ժանդարմ գնդակով վերջ էր տալիս նրա կեանքին։

Ուրիշ հասնելիս, մենք իմացանք որ Կառավարութիւնը ժանդարմների ու զինւորների մի խումք էր ուղարկել քաղաքի հայկական թագերը, հաւաքելու զէնքերը և ընթանալու նրանց հետ ինչպէս այլ տեղերում։ Արովհետեւ տեղեկութիւն ունէին իրենց ազգակիցների զլոին պատահածի մասին—Ուրֆայի քարվանսարաները լցուած լինելով կանացով ու երեխաներով—նրանք զէնքերը չը լանձնեցին, այլ զինւուած դիմադրութիւն ցոյց տուեցին, սպանելով մէկ ոստիկան և երեք ժանդարմ։ Ուրֆայի իշխանութիւնները դիմեցին Հալէս զինւորական օգնութեան համար, և Ջէմալ Փաշալի՝ Արտիալի գահճի հրամանով, Խախրի Փաշան երկութնդանօթներով հասաւ։ Նա աւերեց հայկական թագերը, սպանելով մարդկանց ու երեխաներին, և կանունց մեծ մասին։ բացառութեամբ այնպիսիներին, որոնք անձնատուր էին լինում բաժնեկից լինելու իրենց քոլուրի վիճակին. ոյն է ոստիկ տարագրուելուն՝ Դէյր-էլ-Զօր, իսկ նախ քան այդ, Փաշան և իր պաշտօնեաներն ամենազեղեցիկներն ընտրում էին իրենց համար։ Հիւանդութիւնը տիրում էր նրանց մէջ, տաճիկներն ու քիւրդերը բռնաբարում էին նրանց, իսկ քաղցն ու ծարաւը լլացնում էին բնաջնջումը։

Ուրֆան թողնելուց յետոյ՝ նորից հանդիպեցինք կանանց խմբերի, որոնք ուժապաս էին յոզնածութիւնից ու թշուառութիւնից, և մեռնում քաղցից ու ծարաւից, և մենք տեսանք դիակներն ընկած ճանապարհի երկութեամբ։

Երբոր հասանք մի ինչ որ տեղ, որ մօտ էր Կարա-Ճէվ-րէն կոչուած գիւղին, մօտաւորակէս վեց ժամ հեռու Ուր-

ֆալից, մի աղբիւրի մօտ իջանք ջուր խմելու և նախաճաշելու։ Ես մի քիչ հետացալ գէպի տկն, երբ մի զարհութելի տեսարան բացուեց իմ առաջ։ Մի կին կիսով չափ հագնուած, երեսի վրայ ընկած էր, նրա չապիկը խանդարուած ու արիւնով ներկուած, ունենալով չորս զնդակի վէրք էր կրծքին։ Ես չը կարողացայ ինձ զսպել և լաց եղայ դառնապէս։ Հէնց որ թաշկինակս առաջ արտասուքս սրբելու, և չորս կողմը նայեցի տեսնելու արգեօք ընկերներից որ և է մէկն ինձ նկատել է, մի երեխայ տեսալ, որ ութը տարեկանից տւելի չէր, ընկած երեսի վրայ և նրա գլուխը ճեղքուած կացինով։ Այս բանն իմ կոկիծն աւելի սաստկացըեց, բայց իմ ընկերները կարձ կապեցին իմ ողբը, որովհետեւ ես լսեցի, որ Արիֆ Եֆէնտին՝ զինւորական պաշտօնեան, կանցում էր Սահակ բահանալին և տառւմ, շարտեզ նկ իսկոյն, և ես իմացայ, որ քահանան մի զարհութելի տեսարան պիտի զիտէր։ Ես նրան մծտեցայ, և ինչ տեսայ Երեք երեխաներ ընկած ջրի մէջ, ահաբեկուած քիւրդերից, որոնք հանել էին նրանց հագուստը և տանջնել զանազան ձեւերով, իսկ մարը մօտիկ նտառած՝ ողբում էր ցաւից ու քաղցից։ Նա իր պատմութիւնը պատմեց, ասելով որ Կարինցի էր, և երկար ճանապարհորդութիւնից յետոյ՝ այստեղ էր բերուել այլ բազմաթիւ կանանց հետ։ Երբոր նրանց գրամն ու հագուստը կողոպտուել էին, և իրենց միջի ամենազեղեցիկները ջոկուել ու լանձնուել քիւրդերին, նրանք արտեղ հասան, իսկ ինչ հագուստ որ մնացել էր՝ այստեղի քիւրդերը կողոպտեցին։ Նա այստեղ էր մնացել, որովհետեւ հիւանդ էր, և երեխաները չէին հեռանում իրենցից։ Քիւրդերը նորից նրանց վրայ թափեցին ու մերկ թողեցին։ Երեխաները սարսափեց ջրի մէջ էին պառկել, իսկ մայրը մեռնելու վրայ էր։ Քահանան մի քանի կտոր հագուստ հաւաքեց և տուեց կնոջն ու երեխաներին։ Արիֆ Եֆէնդին մի մարդ ուղարկեց մերձակայ ժանդարմներին պահանձնական միտքին, և որանցից մի ժանդարմ եկաւ, որին պատուիրեց, որ կնոջն ու երեխաներին Ուրֆա տանէր,

և պահականոցի մօտը գտնւող դիտկները թողէր։ Հիւանդի կինս ինձ պատմեց, որ սպանուած կինը մերժեց առևտնզամանք ման ենթարկուելու, և այս պատճառով նա սպանուեց և ազնիւ մահով մեռաւ, անբիծ ու անարատ որ և է պղծութիւնից։ Արպէս զի ստիպէին նրան որ զիջի՛ որդուն սպանեցին իր առաջ, բայց անդրդուելի մնաց և սրտաբեկ եղաւ։

Կէսօրից յետով մենք ճանապարհուեցինք դէպի Կարաջէվէն, և քշողներից մէկը մեզ ցոյց տուեց մի քանի քարձը հոգութմբեր, շրջապատուած քարերով ու ժայռերով, և ասաց, որ ախտեց են սպանուել Զօհրապին ու Վարդգէսը, հայերի նշանաւոր երեխիներն ու երեսփոխանները։

Գրիգոր Զօհրապ եւ Վարդգէս։ — Ոչ ոքի անյայտ չէ Պօլսի հայ երեսփոխան Զօհրապի ով և ինչ լինելը, նրա անունն ու հոչակը տարածուած լինելով Պարլամենտի հաստատումից յետով։ Նա խօսում էր Հմտութեամբ ու խոհականութեամբ, առարկութիւնները հերքելով զօրեղ փաստերով ու համոզեցից ապացուցներով։ Պարլամէնտում արտասանած նրա ճառուերն, ըստ մեծի մասին, գճռական էին։ Նա հմուտ էր բոլոր առարկաներից, յատկապէս օրէնսդիտութիւնից, որովհետեւ նա առարտել էր մի քանի համալսարաններ և երկար ժամանակ պարապէլ փաստարանութեամբ։ Նա օժտուած էր ճարտարախօսութեամբ և մեկնաբանութեան մեծ հմտութեամբ։ Նա քաջախրտ էր, և տնդրդուելի իր վճռականութեան ու աներկիւղ՝ ազգային սպատակների հետապնդման մէջ։ Երբ Իթթիհագականները զգացին, որ թերի են գիտութեան մէջ, անզիտակ վարչագիտութիւնից ու քաղաքական սկզբունքից, և անտեղեակ ազատութեան ու սահմանադրական Կառավարութեան նշանակութեան մասին՝ նրանք որոշեցին անդրադառնալ իրենց թափառ նախահալրերի գրութեան, այն է՝ աւերել քաղաքներն ու ջարդել անմեղ ժողովրդին, որովհետեւ իրենց ընդունակութիւններն այս ուղղութեան մէջ էին։ Արանք Զօհրապին ու նրա սպաշտոնեակից Վարդգէսին վտարեցին Պօլսից, հրաման տալով որ սպանուէին ճանապարհին, և յարտարարուեց, որ

սպանուել են մի խումբ աւազակների ձեռքով։ Նրանք սպանուեցին, որ չ'ասուէր թէ հայերն աւելի ուժեղ են, աւելի կրթուած և աւելի խելացի տաճիկներից։ Ինչու այսպիսի խմբեր միայն հայերին պիտի սպանէին։ Յայտարարութեան լուրի ստութիւնն ակներեւ է։

Զօհրապն ու Վարդգէսը զոհ գնացին իրենց արիտարտութեան ու կամքի հաստատամտութեան։ Նրանք սպանուեցին, որովհետեւ նախանձ էին գրգռել նրանց կրթութիւնն ու հայրենասիրութիւնը և իրենց նպատակին յամտաքար հետապնդումը։ Նրանք սպանուեցին Իթթիհագականների երգուեալ մարդկանցից մէկի՝ ոճրագործ Ահմէդ էլ-Սէրզի ձեռքով։ Նա է, որ սպանեց Զէքի Բէյին։ Օսմանեան յեղափուխան զարժան մէջ նրա պատմութիւնը հանրածանօթ է, և Իթթիհագականները պատճառ եղան, որ ազատեցին նրան արժանի պատժից և մինչև անգամ բանտից։ Մի քիւրդ ինձ պատմեց, որ Վարդգէսն ամենաքաջ ու ամենաարիտարտ մարդկանցից մէկն էր։ Աբդուլ Համիդի ժամանակ հայկան խմբերի խմբակետ էր։ Նա ոտքից վիրաւորուեց թնդանօթի մի գնդակով, երբ տաճիկները հետապնդում էին խըմբերին, և բանտարկուեց կամ Վարինում և կամ Տիգրանտ նահանգի Մատգան քաղաքում։ Սուլթան Աբդուլ Համիդը, իր պաշտօնեաների միջոցով, հասկացնել տուեց փոխելու իր ընթացքը և լնդունելու իր սխալը, որից յետոյ նա կը ներուէր և կը կարգուէր իր ցանկացած պաշտօնի վրայ։ Նա մերժեց նրա առաջարկն առելով. «Եօ չեմ վաճառել իսկիզը պաշտօնի համար, կամ ասել, որ Աբդուլ Համիդի Կառավարութիւնն արդար է, երբ դրա բոնակալութիւնն իմ աշքով եմ տեսնում և շօշափում ձեռքով։»

Ասում են, որ Իթթիհագականները հրաման արձակեցին սպանելու հայ պատգամաւորներին, և սրանց մեծագոյն մասի հետ այսպէս վարուեցին։ Լուր է տարածուած նաև, որ Տիգրան Քէլէկեան հանրածանօթ գրողը, որը Մինաս, ութեան ու Յառաջագիմութեան Կօմիտէի կուսակից էր,

սպանուեց ՚ի տրիտուր նրա կրթութեան, ընդունակութեան և նրանց դատին ցոլց տռւած անձնութրութեան համար: Այսպիսով վարձատրեցին Իթթիհագականներին մատուցրած նրա ծառայութիւնները:

Երեկոյեան հասանք Կարա Զէվրէն և այնտեղ քննցինք մինչև առաւօտ: Արեածագին ճանապարհուեցինք գէպի Սևերէկ, և ճանապարհի կիսին մենք տեսանք մի սոսկալի տեսորան: Սպանուածների անթիւ դիտկներ ընկած էին ճանապարհների երկու կողմերում: Մի տեղ մի կին տեսանք փռուած գետնի վրայ, մարմինը կիսով չտփ ծածկուած իր երկար մազով. մի ուրիշ տեղ կանալք ընկած էին երեսների վրայ, շորտցած տրիւնը սեացնելով նրանց քնքոյշ մարմինները, իսկ մի այլ կողմ տեսանք մարդկանց դիտկներ, խանձուած ու ածուխի նման սեացած արևի տաքութիւնից: Երբոր մօտենում էին Սևերէկին, դիակների թիւն աւելի շատացաւ, որոնց մէջ երեսաները մեծամասնութիւն էին կազմում: Երբ Սևերէկ հասանք և ցած եկանք մեր սոլլից, մենք տեսանք, որ քարվանսարայի ծառաներից մէկը մի նորածին ոսկեհեր մանուկ էր տանում, որին շնութեան յետեր ձգեց: Երբ հարցրինք դրա մասին, նա պատասխանեց, որ քարվանսարայում երեք հիւանդ կանալք կան, որոնք իրենց ընկերներից յետ էին մնացել, և որ մէկը ծնել էր այս մանուկը, որին հիւանդութեան պատճառով չը կարողացաւ սնուցանել: Հետեւ արար նա մեռաւ և գուրս ձգուեց, ինչպէս որ մէկը գուրս է նետում մի մուկ:

Փրկանի պահանջումը. — Սևերէկ եղած ժամանակ, Արէփ Եփփէնդին՝ Կառավարական պաշտօնատներն ոյցելելուց յետոյ՝ ինձ ասաց, որ այսուեզի ժանդարմների հրամանատարը և ոստիկանապետը խնդրել էին իրենց յանձնել իր հետ եկող հինգ հայերին, և երբ մերժում էին ստացել, նրանք պնդել էին, որ եթէ հայերն ուզում են ապահով Տիգրանակերտ հասնել, պէտք է 50 լիրա փրկանք վճարեն: Մենք քարվանսարան դնացինք, ուր պաշտօնեան Սահակ

քահանալին կոչեց և հասկացրեց բանի էութիւնը, Քահանան իր ընկերների հետ խօսելուց յետոյ՝ պատասխանեց որ միասին միայն 10 լիրա էին կարող վճարել, քանի որ ուրիշ գումար չունէին: Երբ նրա խօսքերից համոզուեց, պաշտօնեան ստացաւ 10 լիրան և յանձն առաւ միւսներին ևս գոհացում տալ:

Այս պաշտօնեան Հալէպում վէճ ունեցաւ ժանդարմների հրամանատարի հետ, որովհետև վերջինը փափագում էր ինքը տանել այս հինգ հայերին, պատճառաբանելով որ նրանք ուղարկուել էին մի ժանդարմի հետ յանձնուելու իր պաշտօնատանը: Ուրֆալի անկանոն գօրքի պետ՝ Ահմադ Բէյն ևս ցանկանում էր նրանց տանել, բայց յիշեալ պաշտօնեան մերժեց նրանց յանձնել — ինքը լինելով Միութեան ու Յառաջադիմութեան Կօմիտէի անդամ — և տպահով հասցրեց Տիգրանակերտ:

Դիշերը Սևերէկում անցկացնելուց յետոյ՝ մենք առաւօտը կանուխ ճանապարհ ընկանք: Տիգրանակերտին մօտենալիս՝ դիտկների թիւը շատացաւ, և ճանապարհին հանդիպեցինք մի քանի խումբ կանանց, որոնք Սևերէկ էին գնում, ժանդարմների հսկողութեամբ, լոգնած ու ողորմելի: արտասուքի ու թշուառութեան հետքերն երևում էին նրանց գէմքերի վրայ — մի դրութիւն, որ քարերից արեան արտասուք գուրս կը բերէր, և վայրի գազանների գութը կը շարժէր:

Ի սէր Աստուծոյ, այս կանալք ինչ էին արել: Արդեօք պատերազմ էին յալտարարել տաճիկներին և որ և է մէկին սպանել: Այս գժբախտ արարածների միակ յանցանքն այն էր, որ հայ էին, հմուտ տնարարութեան ու իրենց երեխաների դաստիարակութեան գործին: միակ հոգուը լինելով ամուսինների ու որդիների հանգստութիւնն և իրենց պարտականութեանց և ստարումն հանդէպ նրանց:

Ուզ մօւսութեաններ, ես ձեզ հարցնում եմ. արդեօք սա յանցանք չպիտի համարուի: Մի րոպէ խորհեցէք: Այս խեղճ կանանց մեղքն ինչ էր: Արդեօք նրանց գերազանց լի-

Նելն էր ամեն մասամբ տաճիկ կանանցից։ Դիցուք թէ նրանց ամուսիններն արժանի էին իրենց պատժին, իրաւունք է, որ նրանց կանայք ենթարկուելին այնպիսի վայրագութեան, որից վայրի անասունները մինչև անգամ կըխորշէին։ Աստուած Պուրանում ասել է «Այս բեռնաւորէք մէկին ուրիշի բեռներով։ այսինքն՝ մէկի մի պատժէք ուրիշի լանցանքի համար։

Այս տկար կանայք կամ նրանց երեխաններն ինչ էին արել։ Արդեօք տաճկաց Կառավարութեան մարդիկը կարո՞ղ են թէկուզ մի թոյլ ասլացոյց առաջ բերել արդարացնելու իրենց գործողութիւնը և համոզելու իսլամ ժողովրդին, որ այդ գործողութիւնն ապօրինի է համարում և մերժում։ Ոչ, նրանք չեն կարող արդարանալ մի ժողովրդի առաջ, որի սովորութիւնները հիմնուած են արժարութեան վրայ, և օրէնքները՝ իմաստութեան ու բանականութեան վրայ։

Իրաւունք է, որ այս պատրիչները, որոնք իրենց պաշտպաններ են ձեւացնում Իսլամի, Խալիֆայի և մուսուլմանների՝ դէմ են գնում Աստուծոյ պատուիրանին, Պուրանին, Սօհամմեդի աւանդութիւններին և մարդասիրութեան։ Յիրաւի, նրանք մի գործ են կատարել, որից ցնցւում է Իսլամը։ Նաև բոլոր մուսուլմաններն ու երկրիս ժողովուրդները, լինեն նրանք մուսուլմաններ, քրիստոնեաներ, հրէաներ կամ կուապաշտներ։ Աստուած վկայ է, որ ամօթալի արարք է, որի նմանն իրեն քաղաքակիրթ համարող ոչ մի ազգ չէ արել։

Մանուկն անապատում։ — Երբ բաւականուչափ հեռու էինք գնացել, չորս տարեկան մի երեխայ տեսանք՝ գեղեցիկ դէմքով, կապոյտ աչքերով, ոսկեհեր և սկզբում փափուկ կեանքի սովորած բոլոր նշաններով՝ կանգնած արեւում, անխօս ու անշարժ։ Պաշտօնեան սայլապանին պատուիրեց, որ կանգ առնէ, և ինքը ցած եկաւ և երեխային հարց ու փորձ արեց, սակայն ոչ մի պատասխան չ'ստացուեց։ Պաշտօնեան ասաց. «Եթէ այս երեխային մեզ հետ Տիգրակերտ տանենք, այնտեղի իշխանութիւնները մեզանից կը

վերցնեն, և կ'ենթարկուի իր միւս հալրենակիցների վիճակին և կ'սպանուի։ Աւելի լաւ է նրան այստեղ թողնենք։ Պուցէ Աստուած քիւրդերից մէկի գութը շարժէ, և նրան տանէ ու մեծացնէ»։ Մենք չ'կարողացանք որ և է բան ասել նրան։ Նա սայլը մտաւ և շարունակեցինք մեր ճանապարհը, թողնելով երեխային նոյն գրութեան մէջ—անխօս, անշարժ ու անարտօսր։ Ո՞վ գիտէ, ինչ մի հարուստ կամ երեսելի մարդու տղայէր նա։ Հազիւ լոյս տշխարհ էր եկել, երբ իր ծնողների ու ազգականների սպանմամբ՝ որբանում է։ Նրա տանողներն երեւի ձանձրացել էին—որովհետեւ իրենց ևս չէին կարողանում տանել—ուստի նրան լքել էին անապատում, հեռու մարդաբնակ տեղից։ «Կառավարածելի չէ», որ մարդս, որ գիտէ քաղցրութեամբ վարուել անասունների հետ, և նրանց պաշտպանութեան համար ընկերութիւններ է հիմնում՝ անգութ լինի դէպի իր ցեղակիցը, մանաւանդ դէպի անտրատունջ մանուկները։ Նա կիզիչ արեւում է թողնում նրանց, ծարաւ ու սովատանջ, կեր գառնալու վայրի անասուններին։

Ճղային թողնելով՝ տոչորուած սրտերով, տխուր ու տըրտում՝ արևմտոցից յառաջ հասանք մի քարվանսարա, Տիգրակերտից մի քանի ժամ հեռու։ Այնտեղ գիշերեցինք, և առաւատեան շարունակեցինք մեր ճանապարհը սպանուածների յօշոտուած դիակների միջով։ Ամեն կողմ նոյն տեսարանը բացւում էր մեր առաջ։ Մի մարդ ընկած էր, կըծքից գնտակահար. մի կին բզբդուած՝ կապարով. մի երեխայ վերջին քունը քնելիս մօր կողքին. մի ծաղկահասակ աղջիկ մի այնպիսի դիրքում, որ ներկայացնում էր իր վախճանի կերպն։ Այսպէս էր մեր ճանապարհը մինչև հասանք Տիգրանակերտի մօտ գտնուող՝ կարա Փունար կոչուած ջրանցքը, և այստեղ մի փոփոխութիւն նկատեցինք սպանութեան ու բարբարոսութեան ձեի մէջ։

Այստեղ մոխրացած դիակներ տեսանք։ Ծածկագէտ Աստուածը միայն գիտէ քանի երիտասարդներ ու գեղանի

տղջիկներ, որոնք երջանիկ կեանք պիտի վարէին միասին՝ ալուել էին ալս չարաբաստիկ տեղը:

Մենք ակնկալում էինք ալլ ևս չ'տեսնել դիակներ Տիգրանակերտի պարիսպների մօտ, սակայն սխալուել էինք, որովհետեւ մենք անցանք դիակների միջով մինչև քաղաքի դուռը: Կոտորածներից յետոյ, Հայաստանից վերադարձող մի քանի Եւրոպացիներից ես տեղեկացար, որ Կառավարութիւնը հրաման տուեց թաղելու ճանապարհին գտնուող դիակները, երբ ինդիրն Եւրոպական թերթերի քննադատութեան նիւթէր դարձել:

Բանտում. — Տիգրանակերտ հասնելիս՝ պաշտօնեան մեղ յանձնեց իշխանութիւններին և մենք բանտ նետուեցինք, ուր ես մնացի 22 օր: Այս միջոցին լիտակատար տեղեկութիւններ տուեց շարժման մասին բանտարկուածներից մէկը, որը Տիգրանակերտցի մահմեդական էր, և պատմեց ինձ ինչ որ պատահել էր հայերին այստեղ: Նրանից հարցրի իմանալու դէպքի պատճառը, թէ ինչու Կառավարութիւնն ալս ձեռվ էր վարուել, և թէ արդեօք որ և է գործ կատարել էին հայերը, որ առիթ տար նրանց կատարեալ բնաշնչման: Նա ասաց, որ պատերազմի յայտարարութիւնից յետոյ՝ հայերը, յատկատէս երիտասարդները, չ'կատարեցին Կառավարութեան հրամանները, որ շատերը խոյս տուին դինուորական ծառայութիւնից՝ փախուստի դիմելով, և կազմեցին ընկերութիւններ բարեգործական անուան տակ: Հարուստ հայերից դրամ հաւաքեցին զէնք գնելու համար, որը չը լանձնեցին Կառավարութեան, ալլ ուղարկեցին լիշեալ ընկերութիւններին, մինչև նշանաւոր հայերն ու երևելիները հաւաքուեցին, գնացին Կառավարական պաշտօնատունը, և ինդրեցին պատժելու այս մարդկանց, որովհետեւ դժոհու էին նրանց գործելակերպից:

Ես հարցրի, թէ արդեօք հայերը Տիգրանակերտում Կառավարութեան որ և է պաշտօնեայ, տաճիկ կամ քիւրդ են սպանել: Նա պատասխան տուեց, որ ոչ ոքի չեն սպանել,

սակայն նահանգապետ Ռէշիդ Բէյի և ժանդարմների մեծաւոր Ռօշդի Բէյի ժամանելուց մի քանի օր յետոյ՝ արգելուած զէնքեր էին գտնուել մի քանի հայ տներում նաև եկեղեցում: Զէնքերը յայտնուելուց յետոյ՝ Կառավարութիւնը զիխաւոր հայերից մի քանիսին կանչեց և բանտարկեց: Հոգեոր իշխանութիւնը յաճախ դիմումներ արեց բանտարկուածների արձակման. համար, բայց Կառավարութիւնը փոխանակ յարգելու խնդիրը՝ հոգեորականներին ևս բանտարկեց, և այսպէս բանտարկուածների թիւը բարձրացաւ մօտաւորապէս 700-ի: Մի օր ժանդարմների հրամանատարն եկաւ և յայտնեց, որ համաձայն Կայսերական մի հրովարտակի՝ Մուսուլ պիտի աքսորուեն, և այնտեղ մնան մինչև պատերազմի վերջը: Այս կարգադրութեան վրայ նրանք ուրախացան, ճարեցին ինչ որ պէտք էր—դրամ, հագուստ և կարասիք—և մտան քէլէկների մէջ (փայտէ լաստեր յենուած ուռցրած տկերի վրայ, որոնց այն սահմանի բնակիչները գործ են ածում Եփրատ ու Տիգրիս գետերում) Մուսուլ գնալու նատ չ'անցած՝ հասկացուեց, որ բոլորը ջրասոյզ էին եղել Տիգրիսում, և ոչ ոք չ'էր հասել Մուսուլ: Իշխանութիւնները շարունակեցին գուրս ուղարկել հայերին և սպանել գերդաստան՝ գերդաստան, մարդկանց, կանանց ու երեխաներին: Տիգրանակերտից արտաքսուած առաջին գերդաստաններն էին՝ Պազարկեան, Տիրպանջեան, Մինասեան և Քէչէջեան, որոնք քաղաքի ամենահարուստն էին: Ինչքան որ յիշում եմ, 700 հոգու մէջ մի եպիսկոպոս կար Հօմանդրէաս\* անունով: Նա հայ կաթոլիկ եպիսկոպոս էր, ութսունամեալ մի պատկառելի և կրթուած ծերունի: Նրանք ոչ մի յարգանք ցոյց չը տուին նրա սպիտակ մօրուքին, ալլ ջրախեղդ արին նրան Տիգրիսում:

Տիգրանակերտի թեմակալ Մկրտիչ եպիսկոպոսն ևս 700 բանտարկուածների թւումն էր: Երբոր տեսաւ իր ժողովրդի գլխին պատահածները, նա չը կարողացաւ տանել բանտար-

\* Երևի Հայր Անդրէաս: ծ. թ.

կութեան ամօթն ու անպատռութիւնը, ուստի նաւթ ածեց իր վրայ և այրուեց: Մի մուսուլման, որը բանտարկուել էր՝ դէպքերից երեք տարով առաջ՝ եպիսկոպոսին նամակ գրելիս ինձ ասել էր, որ մի քաջտակիրտ և գիտնական մարդ էր, ժողովրդին նույիրուած, մահից անվախ, բայց անընդունակ ենթարկուելու հարստահարման ու ստրկացման:

Բանտարկուած քիւրգերից մի քանիսը հէնց բանտում յարձակուեցին հայերի վրայ և երկու երեխայ սպանեցին, նրանց դրամն ու հագուստը սոսնալու ագահութեամբ, բայց ոչինչ չ'արուեց նրանց պատժելու: Կառավարութիւնը շատ քիչ հայեր թողեց Տիգրանակերտում, և այն էլ այնպիսիներին, որոնք կօշիկ և ուրիշ բաներ էին կարում զօրքի համար: Բանտում 19 հոգի էին մնացել, որոնց տեսալ և հետ ները խօսեցի: Սրանք, ըստ Կառավարութեան պատճառաբանութեան՝ հայ ահարեկիչներ էին:

Տիգրանակերտից տարագրուած վերջին գերդաստանը Դինջեան ընտանիքն էր, 1915 թ. Նոյեմբերի մօտերքը: Քաղաքի գլխաւորներից մի քանիսը պաշտպանութիւն էին ցոյց տուել յիշեալ գերդաստանին, դրամի և կանանց մի քանիսի գեղեցկութեան սիրոյ համար:

Տիգրան. — Այս մարդը Տիգրանակերտի Պաշնակցութեան Կենտրոնական Կօմիտէի անդամ էր: Նոյն քաղաքի մի պաշտօնեալ, որը պատկանում էր Միութեան ու Յառաջադիմութեան Կուսակցութեան՝ ինձ ասաց, որ իշխանութիւնները բռնեցին Տիգրանին և պահանջեցին ընկերների անունները: Նա մերժեց ասելով, որ անունները չեն կարող տալ, մինչև որ Կօմիտէն ժողով գումարէր և որոշէր արդեօք յարմար էր պահանջած տեղեկութիւնը տալ Կառավարութեան թէ ոչ: Նա ենթարկուեց զանազան տեսակ տանջանքների, զոր օրինակ՝ ոտքերը դրին երկաթի մէջ, մինչև որ ուռեցին և չը կարողացաւ շարժել, եղունգներն ու թարթիչները դուրս տուին տնիքաւ գործիքով, եալին. բայց նա ոչ մի բառ չ'ասեց և ոչ էլ ընկերների անունները յայտ-

նեց: Նա աքսորուեց միւսների հետ և մեռաւ ազնուաբար 'ի սէր իր հայրենիքի, և մահն աւելի գերագասեց քան թէ իր քաջ ժողովրդի գաղտնիքը մատնել Կառավարութեան:

Յակովը Քէտէնջեան. — Յակովը Քէտէնջեան բանտարկուած հայերից մէկն էր, որին ամբաստանել էին Տիգրանակերտի հայ Կուսակցութեան պարագլուխներից լինելու համար, և իր մօտ պայմուցիկ նիւթ ունենալու պատճառով: Յաճախ նրա հետ խօսում էին և խնդրում, որ իր պատմութիւնը պատմէր: Նա ասաց որ մի օր, երբ տունը նստած էր, ոստիկանութեան մի գործակալ դուռը բաղկեց և յայտնեց, որ ոստիկանապետն ուզում է նրան տեսնել պաշտօնատանը: Նա գնաց այնտեղ, և ոստիկաններից մի քանիսն ուզեցին իմանալ հայ կուսակցութեան և նրա պարագլուխների մասին: Նա պատասխանեց, որ ոչինչ չը գիտէ կուսակցութիւնների կամ յեղափոխականների մասին: Ապա նրան գանակոնցեցին և տանջեցին զանազան ձեւերով մի քանի օր, մինչև կեանքից յոյսը կտրեց, և նախընտրեց մեռնել, քան թէ շարունակ ենթարկուել անարգանքի ու ստորացման: Մի դանակ ունէր իր մօտ, և երբ տանջանքը խըստացըն և անտանելի դարձրին, նրանցից թոլլտութիւն խնդրեց արտաքնոցը գնալ, և ապա յայտնել ինչ որ գիտէր հայկական խնդրի մասին: Ոստիկանների օգնութեամբ նա գնաց և իր դաստակների շնչերակները կըտրեց\*... անձնասպանութիւն գործելու նպատակով: Արիւնը գուրս ցալտեց ազատօրէն. Նա հասաւ մինչև ոստիկանութեան դուռը և ալնտեղ ուշաթափուեց: Նրա երեսի վրայ ջուր ցանեցին և ուշքի եկաւ. Նա բերուեց ոստիկանապետի մօտ և հարցաքննութիւնը վերսկսեց\*...: Վերջինը շուարած էր մնացել այս ընթացքի վրայ և նրան հիւանդանոց ուղարկեց մինչև բժշկուէր: Ես տեսալ ձեռքերի վէրքերը, որոնք բոլորպին առողջացել էին: Այս էր պատմութիւնն, որ ինքն

\* Բնագրում յիշած յարագէպն այստեղ զանց է առնուել:

(նախկին) թարգմանիչ

անձամբ ինձ պատմեց։ Նա ցանկութիւն լայտնեց, որ ես լսածս հրատարակէի Ամերիկայում լոյս տեսնող «Հայրենիք» կոչուած հայ թերթում, որպէս զի այնտեղ գտնւող իր Կարապետ եղաւարը կարդար, որը համոզուել էր, որ Կառավարութիւնն ոչ ոքի կենդանի չէր թողնել։

Ես ազատ խառնուում էի բանտարկուած երիտասարդ հայերի հետ, և երկար խօսում էինք այս գործողութիւնների մասին, որոնց նմանը՝ ինչպէս որ պատահում էր նրանց ազգի վերաբերմամբ՝ դեռ չէ լսուել կամ արձանագրուել պատմութեան նախկին դարերում։ Այս երիտասարդներին զինւորական Ատեանը Խարբերդ ուղարկեց քննութեան համար, և լսեցի որ անփորձ հասել էին այնտեղ և թուլլտութիւն ինդրել ընդգրկելու մուսուլմանութիւն։ Այս նրա համար էր, որպէս զի խօսսափէին քիւրդերի արհամարհոտ վերաբերմունքից, որովհետեւ հաւատափոխութիւնը նրանց չէր ազատել պատժից, եթէ ապացուցուէր որ արժանի էին պատժի։ Մեկնումից առաջ, ինձանից հարցրին թէ ես ի՞նչ եմ լսել նրանց մասին, և արդեօք իշխանութիւնները մտադիր էին նրանց սպանել ճանապարհին թէ ոչ։ Երբոք հետաքրքրուեցի և ստուգեցի, որ ճանապարհին նրանց չեն սպանելու՝ ես միամտութիւն տուի նրանց։ Այս լսելով նրանք ուրախացան, քանի որ նրանց միակ փափագն էր կենդանի մնալ և տեսնել պատերազմի հետեանքը։ Նրանք ասացին, որ հայերն արժանի էին ստացած վարմունքին, որովհետեւ կարեւութիւն չէին տալիս նախազգուշական միջոցներ ձեռք առնելու տաճիկների դէմ, կարծելով որ Սահմանադրական Տաճիկ Կառավարութիւնն երբէք չէր դիմել այսպիսի քայլերի առանց լարգելի պատճառի։ Կառավարութիւնն այս չարագործութիւնները կատարեց, թէև ոչ մի քիւրդ, տաճիկ կամ մուսուլման պաշտօնեալ չէ սպանուել մի հայից, և չ'գիտենք ի՞նչ ծանրակշիռ պատճառներից գրդուած՝ նա դիմեց մի այսպիսի աննախընթաց միջոցի։ Եւ իրօք հայերը պիտի նախատուեն անհոգութեան համար, որը շատ թանգ

նստեց նրանց, որովհետեւ մի ժողովուերդ, որ կատարեալ նախազգութիւններ չէ վերցնում ենթակայ է իրաւամբ պախարակուելու մեղադրելի անփոլթիւնն համար։

Իմ նախապարհորդակիցները. — Ժամանակ-անժամանակ ես այցելում էի իմ ճանապարհորդակիցներին, բայց իմ արձակուելուց յետոյ՝ բանտի վարիչը թոյլ չէր տալիս ինձ նրանց մօտ գնալու։ Այդ գէպկում ես խն դրում էի, որ թոյլ տային ինձ խօսելու նրանց որ և է մէկի հետ, հայերի բանտից գուրս։ Նատ չ'անցած, երբ նրանց մասին հարց ու փորձ արի և ինձ ասացին, որ ուղարկուել են գլխատուելու՝ իրենցից յառաջ գնացողների նման՝ ես միչ արձակեցի սոսկումից։ Մի օր մի ժանդարմ տեսայ, որը կարճ ժամանակ բանտարկուած էր մեզ հետ, մեռած հայերից իրեր գողացած լինելու համար, և որովհետեւ նա ճանաչում էր իմ ընկերներին, ես նրանց մասին հարցրի. նա ինձ ասաց, որ իր ձեռքով սպանել է Սահակ քահանային, և որ ժանդարմները գրագ էին եկել գնդակահարելու նրա քահանալական գըլխարկը։ «Ամենալաւ նշանն իմն էր, որովհետեւ այնպէս խըփեցի, որ գլխարկը վայր ընկաւ, իսկ երկրորդ գնդակով վերջ տուի նրա կեանքին»։ Իմ պատասխանը լուութիւն էր։ Այդ մարդը հաստատապէս հաւատում էր, որ այս սպանութիւններն անհրաժեշտ էին և հրամայուած էին Սուլթանից։

Նամակների վաճառումը. — Երբ Կառավարութիւնն առաջին անգամ սկսեց 700 հոգու տարագրումը, պաշտօնեաները հրահանգ ստացան լիշեալների ստորագրութեամբ նամակներ պատրաստելու և ուղարկելու տարագրուածների ընտանիքներին, որպէս զի սխալ առաջնորդուէին, որովհետեւ երկիւղ էին կրում, որ մի գուցէ լիշեալ հայերը մի որ և է քայլ վերցնեն, ծրագիրը խափանելու և գաղտնիքը լայտնելու միւս հայերին, և այսպիսով անիրագործելի դարձնէին նրանց բնաջնջումը։ Դժբախտ ընտանիքները մեծ գումարներ տուին իրենց տան մեծերից եկած նամակաբերներին, Կառավարութիւնը մի անուանի աւազակ քիւրդի կար-

գեց իբրև միլիցիայի պաշտօնեայ, հրամակելով նրան կոտորելու հայերին և յանձնելու նամակներն ըստ պատկանելեաց: Երբ Կառավարութիւնն իրեն ապահով զգաց, հայերից մի մարդ ուղարկեց սպանելու քիւրդին, որի անունն էր Ամի Համան կամ Հասան Ս.մի:

Բողոքական, Քաղղէական եւ Ասորական համայնքների ջարդը.— Զարդն ընդհանուր էր այս համայնքների մէջ, ոչ մի բողոքական զերծ չ'մնաց Տիգրանակերտում: Ասորական համայնքից ութսուն ընտանիք ջնջուեցին, իսկ քաղղէացիներից՝ մի մասը: Տիգրանակերտ նահանգի միւս մասերում ոչ չ'ազատուեց, բացի Միդիաթ և Մ'արդին քաղաքներում գտնւողներից: Երբ վերջերը հրաման արձակուեց, որ միայն հայերին սպանեն, իսկ միւս համայնքների պատկանողներին ձեռք չ'տան, այն ժամանակ Կառավարութիւնը դադարեց վերջիններին կոտորելուց:

Ասորիները.— Միդիաթի շրջանում ապրող ասորիները քաջ մարդիկ էին, աւելի քաջ քան այդ շրջաններում գլուխող ցեղերից: Երբ լուր առան թէ ինչ էր պատահել նրանց եղբայրներին Տիգրանակերտում և նրա շրջակայքում, իրենց ամրացրին Միդիաթի մօտ գտնւող երեք գիւղերում, և հերոսար դիմագրեցին, ցոյց տալով աննկարագրելի մի արիստիւն: Կառավարութիւնն երկու խումբ կանոնաւոր զօրք ուղարկեց, բացի մի խումբ ժանդարմներից, որոնք նախապէս էին ուղարկուել այնաեղ: Քիւրդական ցեղերն ևս միաբանուեցին նրանց դէմ, բայց ապարդիւն: Այսպիսով նրանք պաշտպանեցին իրենց կեանքը, գույքն ու պատիւը հարստահարող Կառավարական հրովարտակութեան բռնակալութիւնից: Կայսերական հրովարտակ հրատարակուեց նրանց ներումն շնորհելով, բայց հաւատ չ'ընծալեցին և անձնատուր չ'եղան, որովհետեւ անցեալ փորձառութիւնը ցոյց էր տուել, որ աշխարհիս երեսին գոլութիւն ունեցող ամենախարդախ Կառավարութիւնն է, որ յետ է վեցընում այսօր, ինչ որ տուել էր երէկ, և ամենաանգութ ձեռով պատժում նրան, որին յառա-

ջազոյն ներել էր:

Խոսակցութիւն Բաղեցի մի պօսային յանձնառնուի եւ իմ բարեկամներից մէկի միջեւ, երբ նսած էին Տիգրանակերտի մի սրբարանում.—

Յանձնառու.— Ես շատ հայեր եմ տեսնում Տիգրանակերտում: Ի՞նչպէս է, որ նրանք գեռ այստեղ են:

Իմ բարեկամը.— Արտնք հայեր չէին, այլ ասորիներ ու քաղղէացիներ:

Յանձնառու.— Բաղեցի Կառավարութիւնն ոչ մի քրիստոնեայ կենդանի չէ թողել իր նահանգում, և ոչ էլ Մուշի գաւառում: Եթէ մի քիշի իր հիւանդին ասէր, որ իր հիւանդութեան գեղը քրիստոնեալի սիրտն էր, նա մէկ հատը չէր գտնել, թէկուզ ամբողջ նահանգը ման գոր:

Քիւրդերի՝ վճարով ցոյց տուած՝ պահպանութիւնը հայերին.— Հայերը բանտարկուած էին Տիգրանակերտի բանտի գլխաւոր բաժանմունքում, և երեմն նրանց այցելում էի: Մի օր, քնից արթնանալուց յետոյ՝ գնացի նրանց այցելելու և տեսայ, որ բըինձ, ալիւր և գումար էին հաւաքում: Պատճառը հարցըրի, և նրանք ասացին. «Ճար չունենք, եթէ շաբաթը մի որոշ քանակութեամբ չը հաւաքենք ու տանք քիւրդերին, նրանք կ'անարգեն և կը ծեծեն մեզ, ուստի այս բաները նրանցից մի քանիսին ենք տալիս, որպէս զի պաշտպանեն միւսների բռնութիւններից»: Ես բացագանչեցի. «Չը կալ ոյժ ու կարողութիւն թողեալ Աստուծու մէջ», և վերադարձայ տեղս, ողբալով նրանց վիճակի վրայ:

Հայերին դուրս ուղարկելը ջարդի համար.— Այս մի ցնցող գործողութիւն էր, սոսկալի խժդժութեամբ: Տիգրանակերտի ժանդարմներից մէկն ինձ պատմեց եղելութիւնը: Նա ասաց, որ երբ հրաման էր տրուում մի ընտանիքի տեղափոխման ու ջնջման, մի պաշտօնեայ գնում էր տունը, համրում ընտանիքի անդամները և յանձնում նրանց միլիցիայի հրամանատարին կամ ժանդարմների պաշտօնեաներին: Պահակ էր դրուում հսկելու տունն և նրա բնակիչներին,

գիշերը մինչև ժամը 8-ը, և այս ձեռվ գժբախտ ընտանիքին լայտաբարւում էր, որ մահուան պիտի պատրաստուեն: Կանալք ճշում և կոծում էին. մտքի տագնապ և լուսահատութիւն երեսում էին բոլորի երեսի վրայ. և մինչև անգամ մեռնողներ եղան նախ քան ջարդի տարուելը<sup>1)</sup>... ժամը 8-ից լետով վագօններ էին գալիս և լնտանիքներին տանում մի մօտակայ տեղ, ուր հրացանի գնդակով էին սպանուում և կամ ոչխարի նման մորթոտում դանակներով, դաշոյններով և կացիններով:

Հայերի զոյթի վաճառումն եւ հկեղեցիներից խաչերի վերցնելը.— Հայերին ջարդելուց յետոյ՝ նրանց տների բոլոր կարստիքը, սպիտակեղենը, ստացուածքն և ամեն տեսակ զործիքները, նաև խանութների ու մթերանոցների իրերը հաւաքում էին եկեղեցիներում կամ ուրիշ մեծ շէնքերում: Խշանութիւնները յանձնախմբեր էին կարգում այս ապրանքների վաճառման համար, որոնք ծախսում էին ամենայածր գնով, ինչպէս որ բնական մահով մեռածների գոյքերի վաճառման դէպքում կարող է լինել, բայց այս տարբերութիւնը կար, որ զոյտաց գումարը յանձնուում էր տաճկաց Կառավարութեան գանձարանը, փոխանակ մեռածների ժառանգներին:

Երեսուն լիրա արժողութեամբ գորգը վաճառւում էր հինգ լիրայով. չորս լիրա արժողութեամբ մարդու զգեստը՝ երկու մէջէդիով, և այս ձեռվ վարւում էին միւս իրերի վերաբերմամբ, յատկապէս նուագարանների՝ օրինակ. դաշնամուրների և ալլ տեսակների հետ, որոնք արժէք չ'ունէին: Փանդարմների հրամանատարն և վալին՝ Ռէշիդ Բէյն՝ հաւաքում էին բոլոր դրամն ու թանկագին իրերը, իսկ վերջինը Պօլիս գնացած ժամանակ իր հետ տարաւ և յանձնեց Թալաաթ Բէյին<sup>2)</sup>...

1) Մի քանի նախագաութիւններ, որոնք կարեն նկարագրութիւններ չեն բովանդակում՝ այսող բաց են թողնուած:

նախկին թարգմանիչ

2) Այս խնդրի վերաբերմամբ մի քանի նկատողութիւններ բաց են թողնուած: նախկին թարգմանիչ

Մարդ ապշած է մնում, երբ մտածում է, որ հայերը՝ այս քաջ ժողովուրդը, որոնք աշխարհս զարմացրն իրենց քաջութեամբ, հաստատամտութեամբ, յառաջադիմութեամբ ու զիտութեամբ, որոնք երէկ Օսմանեան ժողովրդներից ամենաուժեղն ու վէրին աստիճանի զարգացածն էին, այսօր միայն անունով են լիշտում, իրը թէ բնաւ գոյութիւն ունեցած ըլլինեն: Նրանց զիտական գրքերն անպէտք ժուղթ են դարձել, և գործ ածւում պանիր կամ արմաւ փաթաթելու համար և ինձ ասացին, որ մի բարձր աստիճանաւոր ֆրանսիական գրականութեան վերաբերելի երեսուն զիրք էր գնել 50 ֆիարայով: Նրանց աշակերտներով լի գպրոցներն այժմ փակուել են: Այս է հայ ժողովրդի չարագէտ փախճանը: Թող սա նախագուշութիւն լինի ազատութեան ձգտող ժողովրդների համար, և թող հասկանան, որ ազատութիւնը միայն ձեռք է բերւում արիւնհեղութեամբ, և բառերը լոկ թոյլերէ դրամագլուխն է:

Ես նկատեցի, որ եկեղեցիների բարձր գանգակատների խաչերը վերցը էր էին, և զինութիւնները գործ են ածւում իրեւ մթերանոցներ ու շուկաներ՝ մեռած մարդկանց գոյքերը պահելու և վաճառելու:

Զարդի ձեւերը.— Սրանք գանգանակերպ էին: Մի սպալինձ ասաց, որ Բաղէշի նահանգում իշխանութիւնները հայերին հաւաքեցին յարդանոցներում, և ապա գլան առաջ յարդ կուտակելով՝ հրդեհեցին, այնպէս որ միջի հայերը մխից մեռածն: Նա ասաց, որ երբեմն հարիւրաւոր մարդկանց համախմբում էին մի յարդանոցում: Սպանման ուրիշ ձեեր ևս գործադրում էին լիշեալ տեղում: Նա ինձ պատմեց, ի մեծ տիսրութիւն իմ՝ թէ ինչպէս մի աղջիկ իր սիրահարին գըրկում բռնած՝ մտել էր յարդանոցը մահուան դիմաւորելու, առանց սարսուռ զգալու:

Մուշ քաղաքում, մի մասը սպանուեց յարդանոցներում, բայց մեծամասնութիւնը՝ գնդակահարութեամբ կամ դանակի հարուածներով, Կառավարութիւնը վարձած լինելով մսա-

գործներ, որոնք մի լիրա օրտվարձ էին ստանում։ Մի քժիշկ, Սզիկ Բէլ անունով՝ ինձ պատմեց, որ երբ Սեբատիայի շրջանի Մարզուան քաղաքում էր՝ նա լսեց, որ հայերի մի կարաւան ուղարկում էր մորթուելու համար։ Նա գայմագամի մօտ գնաց և ասաց. «Դուք գիտէք, որ ես բըժիշկ եմ, և տարբերութիւն չը կայ բժիշկների ու մսագործների մէջ, որովհետեւ բժիշկները մեծ մասամբ զբաղուած են մարդկանց անդամահատութեամբ։ Եւ որովհետեւ ձեր ալժմեան պարտականութիւնները մերի նման են, այսինքն՝ կտրատումը մարդկային մարմինների՝ խնդրում եմ թոյլ տաք ինձ անձամբ տեսնելու այս վիրաբուժական գործողութիւնը։ Թոյլտութիւն է տրուում և բժիշկը գնում։ Նա չորս մսագործներ է տեսնում, իւրաքանչիւրն ունենալով մի երկար գանակ։ Ժանդարմները բաժանում են հայերին տասն հոգուց բաղկացած խմբերի, և մէկ-մէկ ուղարկում մսագործներին։ Մսագործը հային պատուիրում է պարանոցն երկարացնել. նա էլ այդպէս էր անում և մորթուում ոչխարի նման։ Բժիշկը զարմացել էր տեսնելու նրանց անլողողդրութիւնը մահուան առաջ, առանց մի բառ ասելու կամ ցոյց տալու երկիւղի մի նշան։

Ժանդարմները նաև կապում էին կանանց և երեխաներին և ցած զլորում մի շատ բարձր տեղից, այնպէս որ գետին հասնելով կտոր կտոր էին լինում։ Այս տեղի ունեցաւ մի տեղ, որ գտնուում է Տիգրանակերտի ու Մարդինի միջին, և մեռածների ոսկորները մինչև այսօր կուտակուած են այնտեղ։

Մի ուրիշ տեղեկատու ինձ յայտնեց, որ Տիգրանակերտի իշխանութիւնները հայերին սպանել էին գնդակահարութեամբ, մսագործների ձեռքով և կամ լցոնելով նրանց ջլրհուրների և ալյրերի մէջ, և բերանները փակելով մինչև որ մեռնում էին։ Նրանց նաև ձգել են Տիգրիս ու Եփրատ գետերի մէջ, և դիակները պատճառ դարձել ժանտատենդի համաժարակի։ Երկու հազար հոգի մորթուուել էին Տիգրանա-

կերտի պարիսպներից գուրս մի տեղում, որը գտնւում է Սուլթան Մուրադի ամրոցի և Տիգրիսի միջն, և քաղաքից ոչ աւելի քան կէս ժամ հեռաւութեան վրայ։

Ժանդարմների և ինւրդական ցեղերի վայրագութիւնը. Ո՛չ մի կասկած չը կայ, որ ինչ որ պատմուել է ժանդարմների և քիւրդական ցեղերի մասին՝ իրօք տեղի է ունեցել։ Երբ հայերի մի կարաւան յանձնւում էր ժանդարմներին, վերջինները մէկ-մէկ խուզարկում էին մարդկանց ու կանանց, վերցնելով նրանց ունեցած դրամները, և ամենալաւ հագուստները։ Երբ միամտում էին որ դրամ, լաւ հագուստ կամ ուրիշ արժէքաւոր իրեր չէին մնում<sup>9</sup> նրանց վաճառում էին քիւրդերին հազարաւորներով, պայմանով որ ոչ ոք կենդանի չը մնար։ Գինն որոշւում էր խմբի թուի համաձայն։ Մի վստահելի տեղեկատուից իմացայ, որ դէպքեր են եղել, երբ զինը տարբերած է եղել 2000-ից մինչև 200 լիրա։

Կարաւանները գնելուց յետոյ՝ քիւրդերը կողոպտում էին բոլոր հայերի հագուստները, մարդկանց ու կանանց, այնպէս որ բոլորովին մերկ էին մնում։ Ապա նրանց անխնայ գնդակահարում էին, որից յետոյ ստամոքսները կտրելով բանում էին՝ փորստիքների մէջ դրամ փնտրելու. Նաև քանդում էին հագուստները, կօշիկները և այլն, նոյն նպատակի համար։

Այսպէս էր պաշտօնական ժանդարմների ու քիւրդերի վերաբերմունքը դէպի իրենց համաստեղծ ընկերները։ Խմբերի վաճառման պատճառն այն էր, որ ժանդարմներն ուզում էին իրենց նեղութիւնը պակսեցնել, և նորանոր խմբեր յանձն առնել, կողոպտելու դրամները։ Վա՛ նրան, որ ոսկէ կամ ոսկեպատ ատամ ունէր։ Ժանդարմներն ու քիւրդերն ուժգնաբար դուրս էին քաշում ատամները նախ քան ջարդի վայրը հասնելը, և այսպիսով տանջանք պատճառում իսկական մահից առաջ։

Մի ինւրդ աղա 50,000 հայ է կոտորում. — Մի քիւրդ

ինձ պատմեց, որ Խալբերդի իշխանութիւնները նոյն նահանգի քիւրդ տղաներից մէկին յանձնեցին երեք խմբերից բաղկացած աւելի քան 50,000՝ Կարինի, Տրավիզոնի, Սեբաստիալի և Պօլսի հայեր, հրաման տալով սպանելու և իրենց մէջ բաժանելու կողոպտելիք գոյքերը։ Նա բոլորին սպանեց և յափշտակեց նրանց գրամն և ունեցածը։ Կանանց Ուրֆա տանելու համար՝ 600 ջորի վարձեց, մարդագլուխ երեք լիրա հաշուելով։ Գումարն ստանալուց յետոյ՝ իր ցեղին պատկանող ջորիները հաւաքեց, կանանց հեծցրեց գրանց վրայ և բերեց մի ինչ որ տեղ, Մալաթալի և Ուրֆայի միջև, ուր բոլորին սպանեց ամենավայրագ ձեռվ, և վերցրեց ամբողջ դրամը, հագուստն ու թանգարժէք իրերը։

Կանանց բոնարարումը՝ մահից առաջ կամ յիշ.\* ) —

Շեյխի եւ աղջկայ միջադէպը. — Ես վերել լիշեցի, որ հայ կանայք խմբերով ուղարկում էին ժանդարմների հսկողութեամբ։ Երբոր անցնում էին մի որ և է գիւղի մոտով, գիւղացիները գալիս էին և ընտրում իրենց ուղեցածը։ Ապա ժանդարմներին մի փոքրիկ գումար տալուց յետոյ՝ իրենց հետ տանում էին։ Մի ինչ որ տեղ, մի քիւրդ Շէլիս, որ 60 տարեկանից աւելի էր, 16 տարեկան մի աղջիկ ջոկեց։ Աղջիկը մերժեց նրա հետ կենակցելու, բայց պատրաստակամութիւն յայտնեց մահմետական գառնալու և պսակուելու իր հասակակից մի երիտասարդի հետ։ Այս բանը քիւրդերին դիւր չ'եկաւ, որոնք առաջարկեցին կամ մահ և կամ Շէլիսը։ Նա նորից մերժեց և սպանուեց։

Բարսում աղա. — Երբ ես գալմագամ էի Խալբերդի նահանգի Քիախտա գաւառում, ես ծանօթ էի նոյն տեղի մի հայ մեծամեծի հետ, Բարսում աղա անունով։ Նա մի արժանաւոր ու քաջ մարդ էր, որ լաւ էր վարում քիւրդերի, տաճիկների և հայերի հետ անխորի։ Նա նոյնպէս բարութիւն էր անում այն գաւառի պաշտօնեաների հետ, որոնք

\* ) Ես հրաժարում եմ մանրամասնութիւնից։ Ցիշուած է, որ չարագործութիւն կատարողներն եղել են ժանդարմներն ու քիւրդերը։

Նախկին թարգմանիշ

արձակուում էին իրենց պաշտօնից։ Այդ կողմի բոլոր քիւրդ աղաները խիստ հսկում էին նրա վրայ, ատում նրան և նախանձում նրա գրաւած բարձր գիւրքի համար։ Իմ տարագրումից յետոյ՝ Երբ Սևերէկ հասայ և լսեցի հայերի գլխին պատահածների մասին, ես հետաքրքրուեցի նրանով և նրա կեանքով։ Ինձ պատմեցին, որ Երբ Կառավարութիւնը վտարում էր Քեախտալի հայերին, նրան կանչեց և հրամալեց ներկայացնել իր պարտամուրհակները (այդ գաւառի քիւրդերն ու հայերը 10,000 լիրա պարտական էին նրան)։ Նա պատասխանեց, որ մուրհակները պատառել է և ազատել պարտապաններին իրենց պարտաւորութիւններից։ Նա աքսորուեց միւս հայերի հետ, և Երբ Եփրատ գետը հասաւ՝ նա թուլառութիւն խնդրեց ինքն իրեն խեղդելու։ Խնդիրը յարգուեց, և Երբ նա աշխատեց այդ բանն անելու՝ չը կարողացաւ իր ոյժերը հաւաքել, ուստի ժանդարմներին առաց. «Կեանքը թանգ է և ես ինձ չեմ կարող սպանել, ուրիմն ձեր ստացած պատուէրի համաձայն ընթացէք»։ Այս խօսքի վրայ նրանցից մէկը գնդակահարեց նրան և ապա ընտանիքի մնացեալ անդամներին սպանեց։

Մի երիտասարդ տանկի պատմութիւնը. — Այս Երիտասարդը, որը Տիգրանակերտ էր եկել իբրև ուսուցիչ, ինձ պատմեց, որ Կառավարութիւնը Բրուստի հայերին իմաց էր տուել, որ նրանց տարագրումը վճռուել էր, և պիտի մեկնէին դէպի Մուսուլ, Սիւրիա կամ Ել-Դէլ, Երեք օր հրամանն ստանալուց յետոյ։ Ապա սկսեցին վաճառել ինչ որ կարողացան և սայլեր ու կառքեր վարձեցին իրենց ու ապրանքների փոխագրութեան համար, և ճանապարհ ընկան — ինչպէս որ կարծում էին — դէպի իրենց սահմանուած տեղերը։ Երբոր հասնում են մի խիստ քարքարոտ ու ամայի տեղ, շատ հեռու որ և է գիւղից, կառապանները համաձայն ստացած հրահանգների՝ կոտրատում են կառքերը և ժողովրդին ժողնում անշէն տեղում, և գիշերը վերադառնում նրանց կողոպտելու։ Շատերն այնտեղ մեռան քաղցից ու սար-

սափից, մի մուսը ճանապարհին սպանուեց, իսկ քիչերը հասան Սիւրիա կամ էլ-Դէլի:

Երեխաների մեռնելը բաղյից ու ծարաւից.— Էլ-Ջէզիրացի մի արար, որն ուղեկցում էր ինձ Տիգրանակերտից փախուստի ժամանակ՝ պատմեց, որ իր ցեղի մի Նէլիսի հետ, մարդկանցով և ուղտերով գնացել էր ցորեն առնելու էքրահիմ Փաշա Էլ-Մէլլիի սրդիներից: Ճանապարհին նրանք տեսան 17 երեխաներ, ամենամեծն ոչ աւելի 13 առեկանից, մեռնելիս քաղցից ու ծարաւից: Արաբն ասաց. «Մենք մի փոքրիկ տիկ ջուր ունեինք և մի քիչ կերակուր երբ Նէլիսը նրանց տեսաւ՝ կարեկցութիւնից արտասուեց, և իր ձեռքով կերակուր և ջուր տուեց. բայց ինչ օգուտ կարող էր տոլ այս փոքրիկ պաշարը: Մենք մտածեցինք, որ եթէ վերցնէինք և փաշալի մօտ տանէինք, նրանք կը սպանուէին, որովհետեւ քիւրդերը Կառավարութեան հրամանով սպանում էին բոլոր հայերին, և մեր արաբները հ օրուայ ճանապարհ հեռու էին այդտեղից: Ուստի ուրիշ ելք չը կար եթէ ոչ Աստուծու սղորմութեանը թողնելու, և մի շաբաթ անց՝ մեր վերադարձին, բոլորին մեռած տեսանք»:

Նահանգապետի պատմութիւնը.— Մենք խօսում էինք հայերի արիութեան և լաւ յատկութիւնների մասին, երբ մի նահանգապետ, որ մեզ հետ էր, մի տարօրինակ պատմութիւն պատմեց: Նա ասաց. «Պատուէրի համաձայն՝ ես հաւաքեցի մնացեալ հայերին, թւով 17 կին և մի քանի երեխաներ, որոնց մէջ կար մի հիւանդոտ երեքամեալ երեխալ, որը դեռ չէր կարողացել ման դալ: Երբ մսագործներն սկսեցին կանանց մորթել և երեխալի մօր հերթն եկաւ, երեխան ոտքի վրայ կանգնեց, մի փոքր տեղ վազեց և ապա վայրը լնկաւ: Մենք զարմացանք այս բանի և նրա իմացականութեան վրայ, որ նախտառեանում էր իր մօր սպանուելը: Մի ժանդարմ մօտեցաւ, բռնեց նրան և անցնացած դրեց մեռած մօր վրայ: Նա ասաց նաև, որ այս կանանց մէկին տեսաւ, մի կտոր հաց ուտելիս երբ գնում էր մսագործի մօտ, և մի

ուրիշին տեսաւ սիգարէթ ծխելիս, իբր թէ ոչ մի փոլթ չունէին մահից:

Եկվութ Բէյի պատմութիւնը.— Եկվութ Բէյ, այն պաշտօնեաներից մէկն, որոնց յանձնուած էր հայերի ընածնջումը՝ ուրիշների հետ ինձ պատմեց հետեւեալ պատմութիւնը: «Մի խմբի հետ ես զնում էի, և երբ Տիգրանակերտի պարիսպներից մի փոքր հեռացանք և սկսեցինք հայերին զնդակահարել, մի քիւրդ ինձ մօտեցաւ, ձեռքս համբուրեց և խնդրեց ինձ, որ մի տասնամեալ աղջիկ տամ նրան: Ես գաղաքարեցնել տուի գնդակահարութիւնը, և մի ժանդարմ ուղարկեցի աղջիկն ինձ մօտ բերելու: Երբ նա եկաւ, մի տեղ ցոյց տուի նրան և ասացի: «Այստեղ նստիր, ես քեզ տուել եմ այս մարդուն. զու կ'ազատուես մահից»: Մի փոքր ժամանակից յետոյ՝ ես տեսայ, որ նա իրեն ձգել էր մեռած հայերը մէջ, ուստի ես պատուիրեցի ժանդարմներին, որ դադարեցնեն կրակելը և նրան դուրս բերեն: Ապա ասացի. «Ես գթացի քո վրայ և միւսներից քեզ բաժանեցի կետնքդ փրկելու: Ինչու ես նորից նրանց մօտ գնում: Այս մարդու հետ գնա, և նա քեզ դստեր նման կը պահի»: Նա ասաց. «Ես մի հայի աղջիկ եմ, իմ ծննդներն ու ազգականները սպանուել են որանց մէջ. նրանց փոխարէն ուրիշին ես չեմ ճանացել, և այլեւ ես չեմ ցանկանում ուստի նրանց ապրելու: Յետոյ՝ նա լաց ու կոծ տրեց. ես շատ աշխատեցի նրան համոգել, բայց նա չէր լուսւմ. ուստի բաց թողեցի: Նա խնդադին հեռացաւ ինձանից, իրեն նետեց ծնողների միջև, որոնք հոգեվարքի մէջ էին. և այնուղ սպանուեցու: Ապա աւելացրեց. «Եթէ երեխաների վարմունքն արսպէս էր, ուրեմն նրանց մեծերին ինչ կը լինէր»:

Հայ կանանց զինը. — Դէյր-էլ-Զօրից մի վստահելի տեղեկատու ինձ յայտնեց, որ լիշեալ տեղի մի պաշտօնեայ ժանդարմներից երեք աղջիկ էր գնել, իւրաքանչիւրը մի քառորդ մէջիգիովի: Մի տիլ մարդ ինձ ասաց, որ մի շատ գեղեցիկ աղջիկ էր գնել մի լիրակով. և ես լսեցի, որ ցեղերի

մէջ հայ կտնալք վաճառուել էին հին կահ-կարասիքի կտոր-ների նման՝ ցածր գներով, մէկից մինչև տասը լիրա կամ մէ կից մինչև հինգ ոչխար<sup>1)</sup>: . . .

Մուրէարիմն ու հայ աղջիկը. — Երբ Ռաս-էլ Եյնից մի խումբ հայեր Դէյր-էլ-Զօր են հասնում, Մութէսարիֆը ցանկանում է կանանց միջից մի աղախին ընտրել: Նրա աշքն ընկնելով մի գեղեցիկ աղջկայ վրայ՝ մօտենում է նրան: Մօտ եկած ժամանակ՝ աղջիկը գունատուում և ուզում է ընկնել: Մութէսարիֆը նրա երկիւղը փարատում է և հրամայում ծառալին՝ իր տունը տանել. Տուն վերադառնալիս նա հարցնում է թէ պատճառն ինչ էր, որ իրենից երկիւղ էր կրում: Աղջիկը պատասխանեց, որ իր մայրն ու ինքը Ռաս-էլ-Եյնից սւրիշ հայ կանանց հետ ուզարկուել էին մի Զէրքէզ ժանդարմի հսկողութեամբ: Ճանալորհին ժանդարմն իր մօրից դրամ պահանջեց մահուան սպառնալիքով: Նա ասաց, որ չունի, ուստի ժանդարմը նրան չարչարեց մինչև վեց լիրա տուեց<sup>2)</sup>: . . . Յետոյ նրան ասաց. «Մտախօս, դուք հայերդ սովոր էք ստախօսութեան: Դուք տեսել էք, թէ ինչ է պատահել և կը պատահի հայերին, բայց չէք զգուշանում, ուստի քեզ ուզում եմ օրինակ դարձնել միւսների համար»: Ապա գաշոյնով նրա երկու ձեռքերն ու ոտքերը կրտրեց հէնց իմ մօտ և ինձ էլ առաջ քաշեց ու առեանգեց, 'ի ներկայութեան վերջին շնչում գտնուող մօրս: «Երբ ես քեզ տեսալ ինձ մօտենալիս՝ մօրս վիճակը լիշեցի և սարսափեցի քեզանից, կարծելով որ դուք էլ նոյն ձեռով կը վարուէք ինձ հետ, ինչպէս որ ժանդարմը վարուեց մօրս և ինձ հետ, միմեանց ներկայութեամբ»:<sup>3)</sup>

Ծանր աշխատանքի վարձարուրինը. — Տաճիկները

1) Մի անհշան մանրագէպ բաց է թողնուած: Նախկին թարգմանիչ

2) Անյարմար գնրատպան: Նախկին թարգմանիչ

3) Մի անհշան մանրագէպ բաց է թողնուած: Նախկին թարգմանիչ

զինւորական հասակ ունեցող բոլոր հայերին հաւաքել և ցրել էին գանազան բատալիօնների (վաշտերի) մէջ՝ նրանց զինւորական ծառայութիւնը կատարելու: Երբ Կառավարութիւնն որոշեց տարագրել ու բնաջնջել հայերին, ինչպէս լիշուած էր պաշտօնական լայտարարութեան մէջ, հրաման արձակուեց հայերից առանձին բատալիօններ կազմել աշխատելու ճանապարհներում և քաղաքային գործերում: Բատալիօնները կազմուեցին կատարելու ճանապարհների վերաբերեալ և այլ ծանր աշխատանքներ: Ուժ ամիս այս գործերով զբացուեցին, մինչև ձմեռուայ խստութիւնը վրայ հասաւ: Կառավարութիւնն ալլես չը կարողանալով օգտագործել, նրանց Տիգրանակերտ ուզարկեց: Նախ քան նրանց հասուելը, զինուորական պաշտօնեանները հեռագրեցին, որ հայկական զօրքը ճանալուրհին է: Իշխանութիւնները ժանդարմ ուզարկեցին փամփուշի առատ պաշարով՝ խեղճերին հանդիպելու: Ժանդարմները նրանց ընդունեցին հրացանի կրակով, որից 840 մարդ սպանուեց, Տիգրանակերտից ոչ շատ հեռու:

Կանանց մի կարաւան. —\*) . . .

Մի զիւերուայ ապաւտանարան յիսուն լիրայով. — Այն մարդն, որ հայերի բնաջնջման զործի մէջ ամենամեծ ընդունակութիւնը ցուց տուեց՝ Բաշիդ Բէլն էր, Տիգրանակերտի նահանգապետը: Ես արդէն յալտնել եմ թէ քանի հոգի սպանուեցին նրա նահանգում: Երբ նրա պաշտօնանկութեան լուրը հասաւ, մնացեալ հայերն ու քրիստոնեաներն ընդհանրապէս ուրախացան և լիշեալ լուրի տարածումից մի միջոց անցնելուց յետոյ՝ մի քանի հայեր դուրս եռական իրենց թաքսուոցներից և շրջեցին քաղաքի փողոցներում: Նահանգապետը, որ ցանկանում էր իր պաշտօնանկութիւնը գաղտնի պահել և սարսափ տարածել՝ սկսեց հա-

\*) Կարեսրութիւն չունեցող: Հեղինակը նկարազաւում է, թէ ինչպէս մի խմբի հասնելու ժամանակ՝ Տիգրանակերտի բնակիչները շտապել էին ջոկելու կանանց երկու բժիշկ քառն հոգի են ընտրում՝ հիւնդանոցում ծառայելու:

Նախկին թարգմանիչ

լերին տարագրել դեռ աւելի եռանգով, և թաքստոցներից դուրս եկած հայերը նորից թագնուեցին: Տիգրանակերտի գլխաւորներից մէկն ինձ յայտնեց, որ մի հայ 50 լիրա էր վճարել մի բնակչի՝ գիշերը տեղ տալու տնում, նախ քան նահանգապետի հեռանալը: Մի ուրիշն ինձ պատմեց, որ մի հայ մէկի առաջարկած էր եղել գիշերն երեք լիրա տող պատսպարուելու համար մինչև յիշեալի մեկնելը, սակայն երկիւղից մերժուել էր:

Հայ կանանց ողջախոհութիւնը. — \*), Ակիդաթի մի արար ինձ պատմեց, որ Եփրատի ափով անցնում էր, երբ տեսաւ որ քաղաքի խտոնիճաղանձներից մի քանիսը կողոպտում էին երկու կանանց հագուստեղենը: Նա յանդիմանեց նրանց, որ հագուստը վերադարձնեն, բայց նրանք ուշադրութիւն չը դարձին: Կանանց սկսեցին ազաշել ու պաղատել. բայց տեսնելով որ անօգուտ է՝ իրենց գետը նետեցին, մահը գերտափսելով անպատճութիւնից: Նա ինձ պատմեց մի այլ կնոջ մասին, որ ծծկեր երեխայ ունէր և անցորդներից կերակուր էր մուրում, որոնք չափից գուրս վախինում էին իշխանութիւններից նրան օգնելու: Անսուազութեան երբորդ օրը օգնութիւն չը գտնելով՝ նա մտնկան թողեց Ել-Դէյրի շուկայում, իսկ իրեն խեղքեց Եփրատ գետում: Այսպիսով նրանք ցուցադրում են բարձր յատկութիւններ, պատուասիրութեան և քաջութեան, որպիսի բարեմասնութիւններ շատ մարդիկ չունեն:

Աղախիներ Տիգրանակերտում. — Տիգրանակերտում դուք չեք գտնել մի տուն, ուր չը լինեն մէկից մինչև հինգ հայ աղախիներ, մինչև անդամ ամենատղատ խանութպանները մի հոգի պահում են: Արանք հաւանօրէն իրենց ծնող-

\*.) Մի պաշտօնեայ պատմում է, թէ ինչպէս նա մի աղախին ընտրեց մակոյկով լի կանանցից, որոնք պատաստակամութիւն յայտնեցին գոլո՞ւ իրեն ծառաներ և ոչ այլ նպատակով: Նա մէկին տորաւ և մի գիշեր երբ հարբած տուն էր վերագրձել՝ ուզեցել էր նրան բանաբարել: Աղախինը նբան յանդիմանել էր պատշաճ խօսքերով, որից յետոյ իրեն կարգին էր պահել:

ների կենդանութեան ժամանակ չէին զիջել մի բառ խօսելու այն մարդկանց հետ, որոնց ճարահատեալ ծառայում են, իրենց կեանքը փրկելու: Ասում են, որ քաղաքում գըտնւող այս կանանց ու աղջիկների թիւը 5000-ից աւելի է, և մեծամասնութիւնը պատկանում է Կարինի, Խարբերդի և միւս նահանգներին:

Շահին Բէյի պատմութիւնը. — Շահին Բէյն, Տիգրանակերտոցի մի զինւոր, որը միասին ինձ հետ բանառում էր՝ պատմեց, որ մի խումբ հայ կանայք ու տղամարդիկ նրան էր յանձնուել՝ սպանելու համար: Նա ասաց. «Երբ ճանապարհին էինք, մի ծանօթ հայ աղջիկ տեսայ, որը շատ գեղեցիկ էր: Նրա անունը տուի և ասացի. Եկ, ես քեզ կ'ազատեմ և դու կ'ամուսնանաս քո երկը մի երիտասարդ տաճիկ կամ քիւրդի հետ: Նա մերժեց ասելով. «Եթէ ուզում ես ինձ բարութիւն անել, ես մի բան կը խնդրեմ, որ ինձ համար կատարեմ: Նրան ասացի, որ ցանկացածը կը կատարեմ: Ապա ասաց. «Ես այս մարդկանց մէջ մի եղբայր ունեմ, որ ինձանից փոքր է: Աղազում եմ, որ նրան ինձանից յառաջ սպանես, որ մեռնելիս մտահոգ չը լինեմ նրա մասին: Նա ցոյց տուեց իր եղբօրը, որին իմ մօտ կանչեցի: Երբոր եկաւ, քոյլը նրան ասաց. «Մնաս բարով, եղբայր, ես իմ վերջին համբոյլը եմ տալիս, բայց եթէ Տէրը կամենայ, մենք կը հանդիպենք միւս աշխարհում, և Աստուած վրէժինդիր կը լինի մեր կրած չարչարանքների համար: Միմեանց համբուրեցին և տղան իրեն յանձնեց ինձ: Իմ պարտքն էր հնազանդուել հրամանիս, ուստի կացինի մի հարուածով նրա գանգուել ճեղքեցի և նա ընկաւ մեռած: Ապա աղջիկն ասաց. «Ի սրտէ շնորհակալ եմ քեզանից. մի շնորհ ևս քեզանից խնդրում եմ: Նա իր ձեռքերը դրեց աչքերի վրայ և ասաց. «Մի հարուածով վերջ տուր կեանքիս, ինչպէս արեցիր եղբօրս, և այլես ինձ մի տանջեր»: Ուստի մի հարուածով նրան ևս սպանեցի, և մինչև այսօր ես ցաւում եմ նրա գեղեցկութեան, երիտասարդութեան ու սքանչելի քաջասրութեան համար:

Ճանապարհին ընկած հայերի լուսանկարները, զուխ-  
ները փաթարցներով ծածկուած՝ Պօլիս ուղարկելու հա-  
մար.— Տաճկաց Կառավարութիւնը մտածեց, որ կարելի է  
Եւրոպական ազգերը լսեն Հայերի բնաջնջման մտսին և լուրը  
Հրատարակեն ամեն տեղ և նախալաշարում առաջ բերեն  
տաճիկների դէմ: Երբ ժանդարմներն սպանել էին որոշ թը-  
լով Հայերի՝ փաթաթոցներ գրին նրանց զլուխներն և քիւրդ  
կանալք բերին լաց ու կոծ անելու նրանց վրայ, ցոյց տա-  
լու, որ Հայերն էին սպանել իրենց ամուսիններին: Նաև մի  
լուսանկարիչ բերին՝ լուսանկարելու դիտկներն ու արտաս-  
ող կանանց, որպէս զի ապագայում կարողանան համսգել  
Եւրոպակին, թէ Հայերն էին որ յարձակուեցին քիւրդերի  
վրայ և սպանեցին նրանց: Երբեւ հետեւանք՝ քրդական ցե-  
ղերն ոտքի էին կանգնել վրէժ լուծելու, հետեւաբար տաճ-  
կական Կառավարութիւնը մասնակցութիւն չէ ունեցել այդ  
խնդրում: Բայց այս գործողութեան գագտնիքը չէր կարսղ  
անյալ խելացի մարդկանցից, և Երբ տեղի ունեցաւ  
ճշմարտութիւնը յայտնուեց և տարածուեց Տիգրանակերտում:

Հայ կանանց դարձն խլամական կրօնի: — Երբ Կա-  
ռավարութիւնը ձեռնարկեց Հայերի բնաջնջման գործին, մի  
քանի կանալք Մուֆտու և Ղազու մօտ գնացին և փափագ  
յայտնեցին մահմեդական հաւատը դաւանելու: Արանց Հա-  
ւատափոխութիւնն ընդունուեց, և ամուսնացան Տիգրանա-  
կերտի տաճիկ կամ քիւրդ տղամարդկանց հետ:

Դատ չ'անցած՝ Կառավարութիւնն սկսեց հաւաքել այս  
կանանց, ուստի Մուֆտին և Ղազին նահանգապետի մօտ  
գնացին և ասացին, որ լիշեալներն այլևս Հայեր չէին, մու-  
սուլման դարձած լինելով, և սուրբ Օրէնքը չէ թուլատրում  
մուսուլման կանանց սպանելը: Նահանգապետը պատասխա-  
նեց: «Սյս կանալք իմեր են, որոնք ժամանակին մեզ կը  
խածեն: Այս խնդրում մի դիմագրէք Կառավարութեան,  
որովհետեւ քաղաքապետութիւնը կրօն չէ ճանաչում, և Կա-  
ռավարութիւնը գիտէ իր անելիքը»: Մուֆտին ու Ղազին

վերադարձան ինչպէս որ եկել էին, և կանալք ուղարկուե-  
ցին ջարդի: Նահանգապետի պաշտօնանկութիւնից յետոյ՝ որ  
տեղի ունեցաւ, ինչպէս ասուեց, Հայկական տներում ու խա-  
նութիւններում մնացած ապրանքների վաճառման գործում կա-  
տարած զեղծումների պատճառով՝ հրաման հասաւ, որ ըն-  
դունուի որ և է մէկի դարձը իսլամական կրօնի, լինի դա  
մարդ թէ կին: Երկու սեռից մնացած Հայերից շատերը շտա-  
պեցին հաւատը փոխելու իրենց կեանքը փրկելու յուսով,  
բայց կարճ միջոցից յետոյ՝ սրանց ևս ուղարկեցին և մահ-  
մեղականութիւնը չ'օգնեց նրանց:

Գերմանացին եւ հայերը: — Երբ խօսակցութեան նիւ-  
թը Հայերի շուրջն էր դառնում, ես տաճիկներին էի մե-  
ղադրում նրանց գործելակերպի համար, բայց մի օր Երբ  
հարցը վիճաբանութեան առարկայ էինք դարձել, Տիգրա-  
նակերտի մի պաշտօնեայ, որը մոլեռանդ երիտասարդ թուր-  
քերից էր՝ ասաց: «Տաճիկները մեղաւոր չեն այս խնդրում,  
որովհետեւ նախ գերմանացիք գործադրեցին այս ձեզ Լեհե-  
րի վերաբերմարը, և նոյնպէս ստիպեցին տաճիկներին այս  
ընթացքը բռնելու, ասելով որ, եթէ Հայերին չ'սպանեն՝  
զինակցութիւն չէ կարող լինել նրանց մէջ, և հետեւաբար  
Տաճկաստանն ուրիշ ելք չուներ»:

Ալս էր տաճիկի ասածը բառ առ բառ: Նրա ասութիւնը  
հաստատուեց մի այլ տաճիկի խօսքերից, որ ինձ հետ բան-  
տարկուած էր Ա.ալիկեալում, Ա.բգուլ-Քէրիմ էլ-Խալիլի հետ  
թղթակցած լինելու ամբաստանութեամբ: Նա ասաց, որ Դա-  
մասկոսի միջով անցնելիս՝ նա ալյուլել էր այնտեղի Գերմա-  
նական Փոխ-Հիւպատոսին, որը գաղտնաբար իրեն լայտնել  
էր, որ Օպակնհէլմը լատուկ առաքելութեամբ եկել էր  
գրգռելու Զէմալ Փաշալին, որպէս զի Հայածի արաբներին,  
երկու ցեղերի մէջ ատելութիւն սերմանելու նպատակով,  
որից գերմանացիք կարող էին ապագայում օգտուել, եթէ  
անհամաձայնութիւն ծագէր նրանց և տաճկաց միջև: Ալս  
խօսակցութիւնը տեղի ունեցաւ Ա.բգուլ-Քէրիմի գլխատու-  
6

մից մի փոքր ժամանակ յառաջ:

Երկու գայմազամների սպանումը.— Երբ Տիգրանակերտի Կառավարութիւնը հրաման տուեց պաշտօնեաներին հայերին սպանելու, մի Բաղդադցի գայմազամի պաշտօն էր վարում նոյն նահանգի Ել-Իշխանը, և մի Ալբանացի գայմազամ էր Լիջէհի: Այս երկուսը հեռագրեցին, որ իրենց խիզճը թույլ չէ տալիս այսպիսի գործ կատարելու, և հետևաբար հրաժարւում են իրենց պաշտօնից: Հրաժարականներն ընդունուեցին, բայց երկուսն էլ գայտնի կերպով սպանուեցին: Այս խնդիրը զգուշութեամբ հետազոտեցի և ստուգեցի, որ Բաղդադցի արարի անունը Սաբաթ Իշ-Ել-Սուէդի էր, բայց ցաւում եմ, որ Ալբանացու անունը չը կարողացայ իմանալ, որովհետեւ մի ազնիւ գործ կատարեցին, որի համար նրանք պիտի յիշուեն պատմութեան մէջ . . .<sup>1)</sup>

Մի հայ դաւանանում է իր ազգին.—<sup>2)</sup> . . .

Սուլթանի հրամանը.— Երբ ես բանտում էի, տաճկաց սստիկանութեան մի յանձնակատար գալիս էր իր բանտարկւած մի բարեկամի տեսնելու: Մի օր երբ ես և իր բարեկամը միասին էինք, յանձնակատարն եկաւ, և հայերի ու նրանց վիճակի մասին խօսակցութիւն եղած միջոցին, նա նկարագրեց. թէ ինչպէս էր կոտորել նրանց, և թէ ինչպէս մի քանիսը քաղաքից դուրս գտնուող մի այրում ապաստան էին որոնել, և նրանց դուրս էր դերել և երկուսին սպանել իր ձեռքով: Բարեկամը նրան ասաց. «Արդեօք Աստուծուց վախ չունես! Ո՞վ է քեզ իրաւունք տուել մարդ սպանելու

1) Հեղինակն այստեղ նկարագրում է, թէ ինչպէս մի զագի, որին Սաբաթ Բէյի սպանումից յետոյ գայմազամի պաշտօնն էր յանձնուել՝ խօսակցութեան միջոցին պարծանքով յայտնել էր, որ իր ձեռքով չորս հայ էր սպանել: «Նրանք քաջ մարդիկ էին» նա ասել էր, «չունենալով երկիրդ մահից»:

նախկին թարգմանիչ

2) Հեղինակը պատմում է Տիգրանակերտցի մի հայի պատմութիւնը, որը տեղեկութիւներ էր հազրդում ոտտիկանութեան իր ազգակիցներին հակառակ, և յայտնում նրանց թաքստառեղերը նա տեսել է նրան փողոցներում ման գալիս լավը կերպարանքով, և իրեն մի շատ նշանաւոր մարդու տեղ զնելով: Նա նկատում է, որ ազգին մի այսպիսի մատնիչ՝ արժանի է ամենավատ տեսակի մահուան: Նախկին թարգմանիչ

հակառակ Աստուծալին օրէնքից: Նա պատասխանեց. «Սուլթանի հրամանն էր. Սուլթանի հրամանն Աստուծու հրամանն է, և գրա գործադրումը պարտականութիւն է»:

Վիճակացոյց սպանուած հայերի. — 1915 թուականի Օգոստոսի վերջին, Տիգրանակերտի մի պաշտօնեալ, որը հայկական կոտորածների վարիչներից մէկի հետ մտերիմ բարեկամ էր՝ եկաւ այցելելու ինձ բանտում: Մենք հայոց խնդրի մասին խօսեցինք և նա ինձ ասաց, որ միայն Տիգրանակերտում 570,000 հոգի էին կոտորուել, որոնք պատկանում էին թէ Տիգրանակերտի և թէ միւս նահանգներին:

Եթէ այս թուին տւելացնենք յաջորդ ամիսներում 50,000 հոգի սպանուածները, Բաղէշի ու Վանի նահանգներում և Մշոյ գաւառում մօտաւորապէս 250,000 սպանուածները, նաև Կարինում, Խարբերդում, Արտավազում, Բրուսալում, Ուրֆայում, Զէլթունում և Այնթաքում աւելի քան 350,000 կոտորածները, մենք կ'ստանանք սպանուած կամ հիւանդութիւնից, քաջոցից ու ծարաւեց մեռած հայերի 1,200,000 մի համագումար:

Տաճկահայերից 300,000 հոգի տարագրուած մնում են Հալէպի նահանգում, Սիւրիայում և Դէյր-էլ-Զօրում, և կամ գաղթած Ամերիկա, Եգիպտոս և այլուր: 400,000 հոգի գտնուում են Ռումիլիայում՝ Բալկանեան երկիրներում. այսպիսով ընդհանուր թիւը հասնում է 1,900,000-ի:

Այսքանն եմ միայն կարողացել վիճակագրական տեղեկութիւններ հաւաքել կոտորուած հայերի մասին, և այս նիւթի վերաբերմամբ ստորև յառաջ եմ բերում մի հատուած «Էլ-Մօխաթթամ» թէրթից:

«Թան» թէրթի Բալի թղթակիցը յալտնում է, որ Հալէպից ստացած պաշտօնական տեղեկութիւնների համաձայն՝ 1916-ի սկզբում 492,000 տարագրուած հայեր կային Մուսուլի, Տիգրանակերտի, Հալէպի, Դամասկոսի և Դէյր-էլ-Զօրի շրջաններում: Տաճկաց ներքին գործոց նախարար՝ Թալատթ

Բէլն 800,000 հոգի է հաշւում տարագրուածների թիւը և յայտնում, որ այդ թուից 300,000 հոգի կամ ջնջուել են և կամ մեռել վերջին քանի ամիսներում:

Մի ուրիշ հաշիւ աքսորուած հայերի թիւը գնում է 1,200,000 հոգի և յայտնում, որ առ նուազն 500,000 հոգի սպանուել կամ մեռել են աքսորում: (Ել-Մօխաթթամ, Մայիս 30, 1916):

Հայերն եւ արաբական ցեղերը. — Երբոր մօտենում էի Տիգրանակերտին, ես անցայ արաբական շատ ցեղերի միո ջով: Սրանց մօտ հայեր տեսայ, մարդ ու կին, որոնց լաւ վերաբերմունք էր ցոյց տրում, թէև Կառավարութիւնը ցեղերին հասկացնել էր տուել, որ հայերի սպանումը ստիպողական պարտականութիւն է: Ես երբէք չեմ լսել, որ մի հայ սպանուած կամ առեանգոււած լինի որ և է արաբից, բայց լսել եմ, որ մի քանի արաբ մի ջրհորի մօտով անցնելիս՝ հանել էին նրա մէջը նետուած մարդկանց ու կանանց, որոնք վերջին շնչումն էին, և տարել ու խնամել մինչև իրենց գտել էին:

Արաբն ու հայ մօւրացկանուիին. — . . . . .

Պատմութիւնը վերջանում է, մէջ բերելով բարեգործութեան անվախ մի օրինակ, երբ Բաղդադից մի զինուոր օգնում է մի հայ կնոջ, մուրալիս Տիգրանակերտի փողոցներում:

Նախկին թարգմանիչ

## ՎԵՐՋԱԲԱՆ

Եթէ տաճկաց Կառավարութիւնից հարցնէին հայ մարդկանց, կանանց և երեխաների սպանման, և նրանց պատուի ու դոմքի ամենի ձեռքին խաղալիք դարձնելու պատճառները՝ նա կը պատասխանէր, թէ այս ժողովուրդը մուսուլմաններ է սպանել Վանոյ նահանգում, որ նրանց մօտ արգելուած զէնքեր ու պայթուցիկ ուումբեր են զտնուել, և հայկական Կառավարութիւն կազմակերպելու նշաններ՝ դրօշակներ ևայլն՝ են երեացել, բոլորն ապացուցանելով, որ այս ազգը չար ճանապարհներից յետ չէ դարձել, այլ առաջին պատեհութեամբ կ'ապանէ մուսուլմաններին, կ'ապաստամբէ և տաճկաց թշնամի Ռուսաստանի օգնութիւնը կը հայցէ իր իշխողների դէմ: Անմ ինչ որ տաճկաց Կառավարութիւնը պիտի ասէր: Ես խնդրին հետեւել եմ նրա ծագումից: Հարցը եւ մ Տիգրանակերտում գտնուող՝ վանի բնակիչներից ու պաշտօնեաններից, թէ արդեօք հայերը վան քաղաքում կամ նահանգում սպանել են որ և է մուսուլմանի նրանք բացառական պատասխան են տուել, ասելով, որ նախ քան ուուների գալը և որ և է մէկը սպանուելը՝ Կառավարութիւնը հրամայել էր ժողովրդին հեռանալ քաղաքից: Իսկ հայերին ազդարարուել էր իրենց զէնքերը յանձնել, բայց չէին արել, զախենալով թէ քիւրդերի յարձակումից, և թէ Կառավարութիւնից Կառավարութիւնը նաև պահանջել էր, որ երեւլիներն ու գլխաւորները յանձնուէին իրեն պատանդ: Բայց հայերը չէին ընդունել:

Այս բոլորը տեղի ունեցաւ այն ժամանակ, երբ ուուները մօտենում էին Վանին: Երջակայ գաւառների վերաբերմամբ՝ իշխանութիւնները հաւաքեցին հայերին ու քշեցին խորքը, ուր բոլորն էլ մորթոտուեցին. ոչ մի Կառավարական պաշտօնեայ կամ հասարակ մարդ, տաճկի կամ քիւրդ սպանուած լինելով:

Ինչ վերաբերում է Տիգրանակերտին՝ դուք ամբողջ պատմութիւնը կարգացել էք այս զրքում և տեղեկացել, որ ամենաչնչին զէպին անգամ տեղի չունեցաւ, ուր մնաց սպանութիւններ կամ խոսվութիւններ, ստիպելու Կառավարութեանը, որ հայերի հետ վարուէր այսպիսի վայրագութեամբ:

Մենք չենք լոել, որ Պալաւմ հայերը կատարած լինեն որ և է մարդկասպանութիւն կամ ապօքինի դործողութիւն, բայցի քսան

ահարեկիչների ստուգութեան կարօտ պատմութիւնից, որի մասին  
արդէն ակնարկ ուղղել եմ:

Ամենափոքր սխալն անգամ չեն գործել արբերդի, Տրապի-  
զոնի, Սեբաստիայի, Ագանայի կամ Բաղէշի նահանգներում և ոչ  
էլ Մշոյ գաւառում:

Ես պատմել եմ Զէյթունի յարադէպի մասին, որը ծանրա-  
կշիռ չէր, նաև Ուրֆայի մասին, ուր ժողովուրդը դիմեց ինքնա-  
պաշտպանութեան, անմանով իրենց հայրենակիցների զլիխն պա-  
տահածը և գերադասելով մահը անձնատրութիւնից:

Գալով պատրաստութիւններին՝ դրօշակներին, ոռումբերին և  
նման բաններին՝ եթէ ընդունելու լինենք, որ թէկուզ կայ մի փոքր  
ճշմարտութիւն ասութեան մէջ, այդ չէ արդարացնում մի ամ-  
բողջ ժողովրդի մարդկանց և կանանց, ծերունիների և երեխա-  
ների բնաջնջումը, այնպիսի ձեռվ, որ զգուանք է բերում հա-  
մայն մարդկութեան և յատկապէս իսլամութեան և բոլոր մուսուլ-  
մաններին, իսկ նրանք, որոնք անձանօթ են իրերադութեանց  
հետ՝ հաւանօքէն այս արարքները կը վերապրեն մահմեդական մո-  
լեռանդութեան:

Այս տեսակէտը պաշտպանողներին բաւական է մատնանշել  
այն սպանութիւններն ու հարստահարութիւնները, որ Երիտասարդ  
թուրքերը կատարել են Սիւրիայի և Միջազիաքի իսլամ ժողովրդի  
վերաբերմամբ: Աիւրիայում կախել են նշանաւոր ու յանցանք չու-  
նեցող մատուրականներին. ինչպիսին են՝ Շուքը, Էլ-Ամի,  
Արտուր-Վահար Յէյ Էլ-Էնդիլի, Ալիմ Յէյ, Էլ-Ջէզէրի, Էմբր-  
Օմար Էլ-Հօսէյնի, Արդուլ-Դանի, Էլ-Արիսի, Շէֆիզ Յէյ Էլ-Մո-  
վէյյադ, Քօշաի Յէյ Էլ-Շամատ, Արդուլ-Համիդ Էլ-Ջահրավի, Ներ-  
դուլ-Քէրիմ Էլ-Խալիլ, Էմիր Արէֆ Էլ-Շէհարի, Շէյխ Ահմէդ Հասան  
Ֆարար և աւելի քան երեսուն ականաւոր մարդիկ այս դասա-  
կարգից:

Ես հրատարակել եմ այս գրքոյի և նախապէս հերքելու ան-  
ուանարկութիւններն ու զբարատութիւններն ուղղուած իսլամական  
հաւատի և ընդհանրապէս մուսուլմանների դէմ և պնդում եմ, որ  
հայերի կրած չարչարանքները վերապրելի են Միութեան և Յառա-  
ջադիմութեան Կօմիտէին, որոնք կայսրութեան հետ իրենց քմաց  
համաձայն են գարւում. վերապրելի են նաև նրանց ազգայնական  
մոլեռանդութեան և հայերի հետ ունեցած նախանձին և ուրիշ ոչ մի  
պատճառի իսլամական հաւատն անպարտ է նրանց արարքներից:

Վերոյիշեալներից մենք իմանում ենք, որ հայերն այնպիսի  
գործեր չեն կատարել զրդելու տաճիկներին, որ լցուած առակալի

վրէժինդրութեամբ<sup>1</sup> մի ոճիր գործէին, որ աննախընթաց էր մինչի  
անգամ խաւար զարերում: Ապա ինչ էր այն պատճառն, որ տաճկաց  
կառավարութեանը մզեց ջնջել մի ամբողջ ժողովուրդ, որնց մասին  
ասում էին, որ իրենց եղայրներն էին հայրենասիրութեան մէջ,  
որ գլխաւոր գործօնն էին գլուխ բերելու Արդուլ Համիդի բանակա-  
լական իշխանութեան անկումը և մտցնելու Ահամանազրութիւնը,  
որ հաւատարիմ էին կայսրութեան և կուռը տաճիկների հետ կողք-  
կողքի Բալկաննեան պատեզագմում: Տաճիկներն արտօնեցին ու վա-  
ւերացրին հայկական քաղաքական կազմակերպութիւնների հաստա-  
տումը, մի բան որ մերժեցին այլ ազգութիւնների վերաբերմամբ:

Նրանց բանած ընթացքի այս յանկարծական փոփոխութեան  
պատճառն ինչ է:

Այդ այն է, որ նախ քան Ահամանադրութեան հրատարակումը  
Իթթիհագականներն ասում էին բոնակալական իշխանութեանը:  
Նրանք հաւատարութիւն քարոզեցին և ժողովրդի մէջ ատելութիւն  
ներշնչեցին ընդդէմ Արդուլ Համիդի բանակետութեան: Բայց հէնց  
որ իրենց ձեռքն առին իշխանութեան զեկը և ճաշակեցին մեծու-  
թեան քաղցրութիւնները, տեսան որ բոնակալու թիւնն ամենալաւ մի-  
ջոցն էր՝ նրանց հանգատութեան ու բարօպութեան մէջ հաստատելու,  
և օսմաննեան ժողովրդների կառավարութիւնը տաճիկներին միայն  
սահմանափակելու: Այս ժողովրդների վիճակը նկատողութեան առ-  
նելով՝ նրանք տեսան, որ հայն միակ ազգն է. որ կ'ընդդիմանար  
նրանց բոնապետութեան և կը կառուէր զրա դէմ, ինչպէս որ կը-  
ուեց Արդուլ-Համիդի զէմ: Նրանք նկատեցին նաև, որ հայերը գերա-  
զանցում էին րոլոր միւս ցեղերին՝ արուեստների ու արհեստների մէջ,  
որ նրանք աւելի առաջադէմ էին կրթութեան ու կազմակերպութեան  
մէջ, և որ փոքր ժամանակից յետոյ՝ զօրքի պաշտօնեանների մնաւ-  
գոյն մասը հայերը կը լինէին: Նրանք շուարեցին այս բանի վրայ  
և սարսափեցին հետեւանքից, որովհետև գիտէին իրենց իսկ թու-  
լութիւնը և ապիկարութիւնը մրցելու հայերի հետ կրթութեան  
ու յառաջադիմութեան մէջ: Փրկութեան միակ ելքը նրանք ընա-  
ջնջման մէջ էին տեսնում: Ասիթը գտան պատերազմի ժամանակ  
և ձևոնարկեցին այս զազանային գործին ու գործադրեցին ամսնա-  
սուակալի վայրագութեամբ – մի գործ, որ հակառակ է իսլամական  
օրէնքին, ինչպէս յոյց է տրում բազմաթիւ պատուիրաններով  
ու պատմական օրինակներով<sup>1</sup>): . . .

1) Փէյզ-Էլ-Հօսէյն այստեղ թւումէ մի շաբք վկայութիւններ Ղօրանից, Աւա-  
գութիւններից ու մահմեդական պատմութիւններ ՚ի պաշտպանութիւն այս հայեցա-  
կետի:

Այս բանն ՚ի նկատի ունենալով՝ ինչպէս է կարող տաճկաց Կառավարութիւնը ներկայ ժամանակ իրեն արդարացնել կոտորելու մի ամրող ժողովուրդը, որոնք միշտ վճարել են Օսմանեան Պետութեան ամսն տեսակի հարկերը և ընաւ նրա դէմ չեն ապատամբելու. Եիցուք թէ հայ աղամարդիկ արժանի էին մահուան, կտնանց ու երեխաների յանցանքն ինչ էր և արդեօք ինչ կը լինի նրանց յանիրաւի կոտորողների ու անմեղներին կրակով այրողների պատիմը:

Եւ այն կարծիքին եմ, որ այժմ հարկն ատիպում է մահմեդական ժողովրդներին իրենց պաշտպանելու, որովհետեւ եթէ Եւրոպացիներին չը ծանօթացնեն իրերի իսկական զրութեան հետ, նրանք այս արարքը կը համարն իրրե սև բիծ իսլամական պատմութեան մէջ, որ դարեր չեն կարող եղանելու:

Հօրանի համարներց, աւանդութիւններց և պատմական օրինակներից լիովին պարզ է, որ տաճկաց Կառավարութեան գործեւլակերպը բոլորովին հակառակ է եղել իսլամական հաւատի սկզբառներին. Մի Կառավարութիւն, որ իրեն իսլամի պաշտպան է համարում և խալիֆայութեան պահանջ դնում, չէ կարող ընթանալ մահմեդական օրէնքի հակառակ, և մի Կառավարութիւն, որ այրպէս է ընթանում, իսլամական Կառավարութիւն չէ, և ոչ մի իրաւացի յաւակնութիւն չունի այրպէս լինելու:

Մահմեդականների վրայ պարտականութիւն կայ, իրենց անգարտ յայտարարել այսպիսի մի Կառավարութիւնից և չը հնազանդել նրանց, որոնք ոտնահարում են Հօրանի պատուհները և Մարդարքի աւանդութիւնները, և թափում անմեղ արիւնը կանանց, ծերունիների ու մանուկների, որոնք յանցանք չեն գործելու Հակառակ պարագայում, իրենց մեղակից: Կը դարձնեն այս եղեռնաշրջանաթեան, որի նմանը տեսնուած չէ պատմութեան մէջ:

Ի վերջոյ, ևս կուզէի խօսք ուղղել Եւրոպական Պետութիւններին և առել, որ հէնց իրենք են քաջալերել տաճկաց Կառավարութեանն այս ոճիրը գործելու, որովհետեւ տեղեակ էին նրա յորի վարչութեանը, և անցեալում զանազան դէպքերում ցոյց տուած բարբարոս գործելակերպին, բայց արգելը ու խափանարար չը հանդիտացան:

Աւարտած Բօմբէյում, 1916 թ. Սեպտեմբերի 3-ին:

Ֆէօդ Էլ-Զուսէթն

L. G. MINASSIAN

Վ. NAZAR №. 242

JULFA ISFAHAN

\* IRAN \*

3819

2013

ՀԱՅՈՒԹՅՈՒՆ